Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 10 (531) հունիս 1-17, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Հանրությանը ներարկել պայքարի ոգի

Ճգնաժամերի կառավարման համար անհրաժեշտ պայման է կարգապահությունը: Կարգապահությունն իր մեջ ենթադրում է համատարած եւ առանց խտրականության կանոնների ու կարգերի կիրառում:

Դեկտեմբերի 12-ից Արցախի շրջափակումը ճգնաժամային կարգավիճակ է ստեղծել երկրում, իսկ դրա կառավարումն առաջնային օրակարգ է իշխանությունների համար:

Շուրջ մեկ ամիս է, որ մարդասիրական օգնություններով եւ ռուս խաղաղապահների, ինչպես նաեւ Կարմիր խաչի ներգործուն մասնակցությամբ Արցախում նվազել է շրջափակման հետեւանքով առաջացած առաջին անհրաժեշտության ապրանքների սղությունը: Արդեն բնակչությունը վարժվել էր իրողությանը եւ անտարբերության մթնոլորտ էր տիրում բուն խնդրի՝ շրջափակման նկատմամբ: Այդ անտարբերությանը նպաստեց նաեւ իշխանությունների որոշումը՝ «խիստ անհրաժեշտ պայմաններում» քաղաքացիների երթեւեկության արտոնումը: Սակայն իրադարձությունների զարգացումը թույլ չտվեց, որ դյուրահավատության եւ միամտության «ցանկալի» մթնոլորտը շարունակվի:

Հունիսի 16-ից Հայաստանի Հանրապետության տարածքում, Հակարի գետի կամրջի վրա ադրբեջանական դրոշի տեղադրման պատրվակով փոխվեց իրավիճակը:

Ադրբեջանական կողմն արգելափակեց Արցախ մուտք գործող մարդասիրական օգնությունների եւ դեղորայքի մատակարարումը, մինչեւ իսկ չթույլատրվեց ծայրահեղ կացության մեջ գտնվող հիվանդների տեղափոխումը մայր Հայաստան: Խոչնդոտներ ստեղծվեցին նաեւ ռուս խաղաղապահների տեղաշարժի համար:

Այս պայմաններում Արցախում առաջնային խնդիր է խուճապային տրամադրությունների զսպումը: Այդ կարեւոր հանգամանքը առաջին հերթին պետք է լինի Արցախի իշխանությունների ամենօրյա օրակարգում: Հանրության հետ բաց, անկաշկանդ զրույցը, ստույգ տեղեկատվությունը եւ, ինչպես նշվեց, կարգապահությունը այն գործոնները պետք է դառնան, որոնց միջոցով պետք է նվազագույնի հասցնել խուճապային իրավիճակները:

Արցախի իշխանությունները փոխանակ վերջին ամիսներին զորաշարժի ենթարկեն պետական, հանրային եւ մասնավոր բոլոր կարգի ներուժը, անում են ճիշտ հակառակը՝ ցուցաբերում են անճարակություն եւ կեղծ պատրվակներով փորձում են արդարացնել իրենց գործողությունները՝ հատելով իրենց կողմից սահմանված կարմիր գծերը:

Պետական կուռ համակարգի պահպանումը չի նշանակում, որ պետք է կատարել անհասկանալի փոփոխություններ պետական կառույցների գործառույթների մեջ, հաճախակի կադրային փոփոխություններով խառնաշփոթ ստեղծել, խորացնել անորոշությունը եւ այդ ամենի արդյունքում անհուսության տրամադրություններ սերմանել հանրության մեջ:

Հանրությանը պետք է փոխանցել գաղափարական լիցք: Նպատակը դարձնել ոչ թե «լավ ապրուստի» ապահովումը, այլ, դժվար ապրելակերպով հանդերձ, հայրենիքում ազատ ու անկախ ապրելու պայքարի համար պատրաստակամությունը: Ահա այն բանալի գաղափարախոսությունը, որն այսօր պետք է տիրական լինի Արցախում:

Սթափվելու, ընդվզելու վճռական պահն է

2023 թ. հունիսի 9-11-ը Կայացել է ՀՅԴ Հայաստանի 26-րդ Գերագույն ժողովը: Գերագույն մարմի ընտրությունից հետո հրապարակվել է Գերագույն ժողովի հայտարարությունը.

Ժողովը քննել է ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի երկամյա գործունեությունը, Հայաստանի եւ Արցախի հանրապետություններում ստեղծված իրավիճակը, նախանշել առաջիկա անելիքները եւ սահմանել ՀՅԴ Հայաստանի կառույցի գործունեության ուղենիշները:

Ժողովի ավարտին ընտրվել է Գերագույն մարմին հետեւյալ կազմով. Ավետիսյան Թադեւոս, Գալստյան Լիլիթ, Գեւորգյան Արգիշտի, Հակոբյան Վարդան, Մաթիլյան Հակոբ, Մանուկյան Գեղամ, Մեղրյան Պետրոս, Սաղաթելյան Իշխան, Սարգսյան Իգոր, Սիմոնյան Աշոտ, Ստեփանյան Խաչատուր, Վարդանյան Գերասիմ, Տոնոյան Տարոն:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ է ընտրվել Իշխան Սաղաթելյանը:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն ժողովի հայտարարությունը

Սիրելի՛ հայրենակիցներ,

Հայ ժողովուրդը եւ Հայոց պետականությունը կանգնած են գոյութենական ծանրագույն սպառնալիքի առջեւ:

Հայաստանի իշխանությունների որդեգրած ապազգային քաղաքականությունը՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ուրացումը, ՀՀ Անկախության հռչակագրից բխող հանձնառություններից եւ Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավորի սահմանադրական պարտականություններից հրաժարվելը, թուրք-ադրբեջանական պարտադրվող զիջումներն ընդունելու եւ հայ ժողովրդի ազգային պետական շահերը ստորադասելու քաղաքականությունը կործանարար է:

Ադրբեջանի շարունակվող ագրեսիան հանգեցնելու է նոր ցեղասպանության եւ Արցախի հայաթափման, հարցականի տակ է դնելու Հայաստանի պետականության ապագան:

Հայ ժողովրդի թիկունքում հակասահմանադրական ընթացքով ձեռք բերված ցանկացած պայմանավորվածություն կամ փաստաթուղթ չունի իրավական եւ քաղաքական լեգիտիմություն, այն հղի է նոր պատերազմի սպառնալիքով եւ անխուսափելիորեն ապակայունացնելու եւ նոր ցնցումների է տանելու ողջ տարածաշրջանը:

Հակասահմանադրական եւ հակապետական այս ընթացքի անհապաղ կասեցումը օրախնդիր է եւ համազգային առաքելություն:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն Ժողովը ճակատագրական այս հանգրվանում ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՁՈՐԱՇԱՐԺԻ կոչ է հնչեցնում:

Սթափվելու, ընդվզելու, մեր ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՎ ՏԵՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆ ՊԱՀՆ Է:

ԱՐՑԱԽԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍԱԿԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ:

Մենք համոզված ենք՝

իշխանությունների կողմից պարտադրված պարտվողականությանն ու անզորությանն այլընտրանք կա,

հաստատում ենք՝

ներազգային համերաշխության վերահաստատումով եւ համահայկական ներուժով կարող ենք եւ պարտավոր ենք՝

- Վերականգնել Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը,
- Վերականգնել երկրի անվտանգային համակարգը, ազգբանակ համազգային գիտակցումով բարձրացնել երկրի պաշտպանունակությունն ու Հայոց բանակի մարտունակությունը
- Արդյունավետ օգտագործելով միջազգային իրավունքն ու միջազգային հարթակները, համադրելով տարածաշրջանում հետապնդվող աշխարհաքաղաքական հետաքրքրությունները, Հայաստանի ռազմավարական դաշնակիցների զորակցությունն ու դիվանագիտական ռեսուրսները՝ պաշտպանել եւ առաջ տանել Հայաստանի եւ հայ ժողովրդի ռազմավարական շահերը,
- Միջազգային իրավունքի համատեքստում մերկացնել եւ դատապարտել Ադրբեջանի հանցագործություններ՝ ուղղված մարդկության եւ կոնկրետ հայ ժողովրդի դեմ,
- Կասեցնել մեր ազգային ինքնությունը քայքայող օտարածին ծրագրերը, երկրում հաստատել իրական ժողովրդավարություն, հանրային համերաշխություն եւ արդարություն,
- Համահայկական ուժերի մեկտեղումով զորացնել Հայաստանի կարողականությունները, ստեղծել ուժեղ եւ մրցունակ պետություն, որն անզիջում դիմադրությամբ կկանխի թուրք-ադրբեջանական տանդեմի հետապնդած Արցախի բռնակցման, հայաթափման եւ Հայաստանին կենսական զիջումներ պարտադրող պանթուրքական ծրագրերը:

Ներկա է՝ վերը նշված մարտահրավերները դիմագրավելու եւ ստեղծված իրավիճակում հանգուցային բեկում մտցնելու նախապայմանը ազգային իշխանության ձեւավորումն է եւ նոր որակի պետության կառուցումը:

ՀՅԴ Հայաստանի կազմակերպությունն ու ՀՅ Դաշնակցության աշխարհասփյուռ կառույցն իրենց ողջ ներուժով լծվելու են Հայաստանի եւ Արցախի պաշտպանությանն ու փրկությանն ուղղված համազգային ընդվզման եւ դիմադրության ճակատի ձեւավորմանը:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն ժողով
12 հուլիսի, 2023թ.

Ադրբեջանական ապօրինի անցակետի վերաբերյալ հանրային կարծիքների հատման խաչմերուկում

Ադրբեջանական ապօրինի անցակետը հարկի ու անհարկի հատելու, դրա իրավական, քաղաքական ու անվտանգային հետեւանքների մասին «Ապառաժ»-ը զրուցել է Արցախի մտավորականների ու հասարակության ակտիվ անդամների հետ:

Մեր գործողությունները չպետք է հաղթաթուղթ դառնան Ադրբեջանի ձեռքում. Արթուր Մոսիյան

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Արթուր Մոսիյանը նշեց, որ ստեղծված իրավիճակում բոլոր քայլերն ու կատարված գործողությունները պետք է բխեն Արցախի Հանրապետության շահերից. դրանք չպետք է հաղթաթուղթ դառնան Ադրբեջանի ձեռքում:

Նրա խոսքով, այս պայմաններում միջանցքից օգտվելու հատուկ կարգ կա, որին չեն հետեւում, այլ դրա անվան տակ այլ բան է արվում:

«Այդ կարգի անվան տակ հիվանդին ոչ թե մեկ հոգի է ուղեկցում, այլ մի քանի, բժիշկներ են գնում ու չեն վերադառնում: Որեւէ մեկը չի ասում, թե ծայրահեղ ծանր հիվանդին չպետք է տեղափոխեն Երեւան: Խոսքն այն մասին է, որ ինչպես միշտ՝ մի բան է ասվում եւ ուրիշ բան արվում: Իսկ ուրիշ բան արվելը քաղաքական իմաստով հանգեցնում է նրան, որ լեգիտիմացվում է ադրբեջանական անցակետի առկայությունը, որն արցախյան հարցի հետագա հանգուցալուծման վրա կարող է վտանգավոր ազդեցություն թողնել»,- նշել է ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչը:

Ա. Մոսիյանն այն կարծիքին է, որ պետք է մշակվի հստակ կարգ, ինչը կսահմանի՝ ով եւ ինչ պայմաններում իրավունք ունի գնալու:

«Հումանիտար հարցերի դեպքում անցակետը հատելու համար ոչ ոք դեմ չի խոսում: Այլ բան է, որ դրա անվան տակ ուրիշ գործողություններ են արվում, որոնք թշնամական պետության կողմից նկարահանվում եւ ներկայացվում են միջազգային հանրությանը: Մենք չպետք է անենք այնպիսի քայլեր, որոնք գործիք կդառնան ադրբեջանցիների ձեռքում՝ ցույց տալով, թե միջանցքն իբր բաց է»,- ասել է Ա. Մոսիյանը:

Ոչ ոք չի խոսում, թե ով է ապահովելու մեր քաղաքացիների անվտանգությունը նրանց ձերբակալման կամ առեւանգման դեպքում. Իսկուհի Ավանեսյան

Արցախի պետական համալսարանի պատմության եւ քաղաքագիտության ամբիոնի ավագ դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Իսկուհի Ավանեսյանը մեզ հետ զրույցում զարմանալի համարեց

այն փաստը, որ մեր ներքին խոհանոցում քննարկվում է թշնամու անցակետից օգտվելու եւ չօգտվելու հարցը:

«Վերջերս ամենաբարձր մակարդակով տարբեր կառույցների հետ հանդիպումներ ու քննարկումներ են տեղի ունենում՝ արդյո՞ք ճիշտ է անցակետի օգտագործումը, թե՞ ոչ: Այն մարդիկ, ովքեր մասնակցում են այդ հանդիպումներին, պարզվում է՝ նրանց մանրամասնորեն չի բացատրվել այդ անցակետի օգտագործման վտանգները: Հավանաբար, նրանց չի ասվել, որ մեկ անգամ անցնելով այդ անցակետով, մենք մեր տվյալները թողնելու ենք ադրբեջանական հատուկ ծառայությունների մոտ, իսկ դա նշանակում է, որ մենք թիրախավորում ենք մեր քաղաքացիներին, եւ չի բացառվում, որ հաջորդ անգամ անցակետը հատելիս կհայտարարեն, որ մեր մուտքն արգելված է Արցախ, կամ՝ որ մեզ հետախուզում են Ադրբեջանում, բանտարկեն եւ տանեն անհայտ ուղղությամբ»,- նշել է դասախոսը:

Ի. Ավանեսյանի խոսքով, այդ հանդիպումների ժամանակ ոչ ոք չի խոսում, թե ով է ապահովելու այդ քաղաքացիների անվտանգությունը, նրանց ձերբակալման կամ առեւանգման դեպքում ով է պատասխանատվություն կրելու:

→3

Պետական մարմինների թափանցիկ գործելաոճը՝ հանրության վստահության գրավական

Հունիսի 4-ին ԱՀ կառավարությունը տեղեկատվական շտաբի միջոցով հաղորդագրություն էր տարածել այն մասին, որ ՌԴ խաղաղապահ զորակազմի աջակցությամբ ու ուղեկցությամբ 28 անձինք տեղափոխվել են Արցախից Հայաստան, իսկ 27-ը՝ Հայաստանից Արցախ:

Ըստ հայտարարության՝ բոլորը հրատապ մարդասիրական՝ ներառյալ առողջական, հարազատի խնամքի, ընտանիքի հետ վերամիավորման կարիք ունեցող անձինք են:

Այդ անցակետով քաղաքացիների երթեւեկը կազմակերպելու պատճառների մասին հաղորդագրության մեջ նշվում է, որ որոշումը պայմանավորված է՝ «հաշվի առնելով Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման շարունակականությունը, ապրիլի 23-ից Լաչինի (Քաշաթաղի) միջանցքում ապօրինի անցակետի տեղադրումը եւ Արցախի քաղաքացիների հանդեպ ապօրինի հսկողական միջոցների կիրառումը, ՌԴ խաղաղապահ զորակազմի շարունակական անկարողությունն ապահովելու՝ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ամրագրված միջանցքի ռեժիմը, միջազգային հանրության շարունակական անկարողությունը՝ ապահովելու ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի որոշումը՝ Լաչինի միջանցքով մարդկանց, մեքենաների ու բեռների անխափան տեղաշարժի երաշխավորման պահանջով, ինչպես նաեւ՝ Արցախի բնակչության շրջանում օրեցօր խորացող մարդասիրական կարիքները»: Այնուհանդերձ, ինչպես նշվում է հաղորդագրության մեջ, «Արցախի Հանրապետության կառավարությունը ապօրինի է համարում 2022թ. դեկտեմբերի 12-ից մեկնարկած շրջափակումը եւ ապրիլի 23-ից ադրբեջանական անցակետի գոյությունը, ինչպես նաեւ՝ Արցախի քաղաքացիների, մեքենաների ու բեռների տեղաշարժի հանդեպ հսկողական միջամտություններն ու այլ խոչընդոտները»:

Նաեւ ընդգծվում էր, որ «Մարդասիրական խիստ սահմանափակ տեղաշարժը ոչ մի դեպքում չի կարող դիտարկվել որպես Արցախի շրջափակման ավարտ, քանի դեռ Լաչինի միջանցքում առկա են ադրբեջանական հսկողական միջամտություններն ու այլ խոչընդոտները»:

Կառավարության այդ որոշման մասին հայտարարություն է տարածել նաեւ «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժման խորհուրդը՝ մեջբերելով 23.02.2023թ. նախագահ Հարությունյանի ելույթը («բ. շրջափակումը պետք է վերացվի, եւ Արցախը պետք է ունենա անխափան ու անսահմանափակ ցամաքային հաղորդակցություն Հայաստանի Հանրապետության հետ՝ առանց ադրբեջանական կողմի որեւէ ներգրավվածության»,

http://president.nkr.am/am/news/archive/page6/5726/):

Հանրային շարժումն անթույլատրելի է համարել որեւէ կարմիր գծի խախտում, իսկ տեղի ունեցող իրադարձությունները Շարժումը համարել է Արցախի Հանրապետության նախագահի կողմից իր իսկ հայտարարած կարմիր գծի՝ Հայաստանի հետ անխափան եւ առանց սահմանափակումների կապի ապահովման խախտում: Շարժման խորհրդի նախաձեռնությամբ «Լաչինի միջանցք»-ում տեղակայված ադրբեջանական ապօրինի անցակետով քաղաքացիական անձանց երթեւեկի հարցը քննարկելու նպատակով հունիսի 7-ին շարժման նորընտիր խորհուրդը հանդիպում է ունեցել Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի հետ: «Խորհրդի անդամները ներկայացրել են ադրբեջանական հսկիչ անցակետի առկայության անընդունելիությունը, դրա հետեւանքով առաջացող քաղաքական եւ անվտանգային խնդիրներն ու հնարավոր ռիսկերը: Շեշտվել է նաեւ իշխանությունների կողմից նման գործընթացներում պահանջվող թափանցիկության եւ հայտարարված դիրքորոշումների հետեւողական պաշտպանության բացակայությունը: Ավելի քան երկու ժամ տեւած քննարկման ընթացքում հանրային շարժման խորհրդի անդամները պնդել են իրենց տեսակետները՝ ուշադրություն հրավիրելով բարձրացված խնդիրների անվտանգային, քաղաքական, հանրային ընկալման ասպեկտների վրա»,- ասվում է խորհրդի տարածած հաղորդագրության մեջ:

Հանրության մոտ ապօրինի անցակետի գործարկումից բացի՝ վրդովմունք է առաջացրել նաեւ այն, որ «հրատապ մարդասիրական կարիքներ» չունեցող քաղաքացիներ եւս անցել են ադրբեջանական անցակետով: Պարզաբանում ստանալու համար «Ապառաժ»-ը դիմել էր Ռուսական խաղաղապահ զորակազմի հետ համագործակցության ապահովման կենտրոն, որը նախկինում անվտանգության խորհրդի կազմում էր, առանձնացել է փետրվար ամսից: Կենտրոնի աշխատակազմի ղեկավար Արամ Դանիելյանը մեզ հետ զրույցում նշել է, որ ռուսական խաղաղապահ զորակազմի հետ սերտ համագործակցության եւ նրանց ակտիվ ջանքերի շնորհիվ հաջողվել է ապահովել ՌԴ խաղաղապահների ուղեկցությամբ անձանց մասնակի տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն եւ հակառակ ուղղությամբ: Ս.թ. հունիսի 2-ից իրականացվել է շուրջ 160 անձանց վերադարձը Արցախ եւ շուրջ 150 անձանց տեղափոխումը Հայաստան: «Մեկնածների ճնշող մեծամասնությունը ՀՀ քաղաքացիներ էին, որոնք շրջափակման պատճառով մնացել էին Արցախում եւ այժմ հնարավորություն է ստեղծվել նրանց միավորելու ընտանիքների հետ: Մյուսները գլխավորապես այնպիսի մարդիկ են, որոնք ՀՀ բժշկական հաստատություններում հետազոտության, բուժման կամ հարազատի մահվան կամ ծանր վիճակում գտնվելու պատճառով ՀՀ մեկնելու կարիք ունեն»,- նշել է նա՝ ավելացնելով, որ բոլոր դիմումները մանրամասն ուսումնասիրվում են, ինչից հետո դրանց տրվում է համապատասխան առաջնահերթություն:

«Իհարկե, չենք բացառում նաեւ, որ որոշ բացթողումներ էլ կարող են լինել դիմումներում ներկայացված հիմքերի ապացուցման հետ կապված, եւ հետագայում պարզվի, որ անձը այլ, ոչ հրատապ նպատակով է մեկնել Հայաստան: Կարեւոր է նշել, որ ՀՀ-ում դեռեւս մեծ թվով արցախցիներ կան, որոնք ցանկություն են հայտնել վերադառնալու հայրենիք՝ մեծ հույսեր կապելով տվյալ ծրագրի իրականացման հետ: Անհրաժեշտ է շեշտել, որ տվյալ ծրագրի հիմնական նպատակը հանդիսանում է շրջափակման հետեւանքով Հայաստանում մնացած քաղաքացիների վերադարձը Արցախի Հանրապետություն: Բավականաչափ կուտակված հումանիտար խնդիրներ են առկա Արցախի շրջափակման հետեւանքով, եւ ադրբեջանական ապօրինի անցակետի գոյությամբ ու այդ ճանապարհով երթեւեկության անվտանգային ռիսկերով ու սահմանափակություններով պայմանավորված՝ մարդկանց տեղաշարժը կազմակերպվում է բացառապես ռուս խաղաղապահների ու Կարմիր խաչի ուղեկցությամբ: Հատկանշական է, որ նույնիսկ այս պայմաններում, երբ Կարմիր խաչը փորձում է կազմակերպել հիվանդների տեղափոխումը, շատ հաճախ մեկ երթի կազմակերպման համար ստիպված են լինում օրերով բանակցություններ վարել ադրբեջանական կողմի հետ թույլտվություն ստանալու համար»,- մանրամասնել է նա:

«Ռուսական խաղաղապահ զորախմբի հետ համագործակցության ապահովման կենտրոնն ընդունում է միայն ԱՀ քաղաքացիների դիմումները, իսկ ՀՀ եւ այլ երկրների քաղաքացիները դիմում են Ռուսական խաղաղապահների հանրային ընդունարան»,- տեղեկացրել է Ա. Դանիելյանը:

Ռուսական խաղաղապահ զորակազմի հետ համագործակցության ապահովման կենտրոնի մոտ հերթում սպասող կանանցից մեկը մեզ հետ զրույցում նշեց, որ Երեւան է ուզում մեկնել առողջական խնդիրների պատճառով: Մեր հարցը՝ ինչո՞ւ չի դիմել Կարմիր խաչին, անպատասխան մնաց: Մեկ այլ կին էլ ցանկանում էր ՀՀ մեկնել թոռանը խնամելու համար:

Համատարած անորոշության ու անվստահության մթնոլորտում կարեւորում ենք որոշումների կայացման եւ գործադրման մեխանիզմների թափանցիկությունը, ինչպես նաեւ հարկ եղած պարզաբանումների հասանելի եւ պատշաճ ներկայացումը հանրությանը: Հաշվի առնելով, որ ԱՀ նախագահի՝ մայիսի 26-ի հրամանագրով «Սահմանափակվում է կարծիքի արտահայտման ազատությունը, արգելվում են տեղեկատվության որեւէ միջոցով Արցախի Հանրապետության պաշտպանունակության, անվտանգության, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, սահմանադրական կամ հասարակական կարգի, տնտեսության բնականոն զարգացման վերաբերյալ տեղեկություններ փնտրելը, ստանալը եւ տարածելը, այդ թվում՝ դրանց դեմ ուղղված քարոզչությունը», «Ապառաժ»-ը փորձելու է պարբերաբար օրենքի շրջանակներում պարզաբանումներ ներկայացնել հանրությանը հուզող հարցերի մասին:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հ.Գ. *Հոդվածը պատրաստ էր տպագրության, երբ հունիսի 15-ից Հայաստանի Հանրապետության տարածքում, Հակարի գետի կամրջի վրա ադրբեջանական դրոշի տեղադրման պատրվակով փոխվեց իրավիճակը: Ադրբեջանն այդ անցակետով արգելել է ցանկացած տիպի երթեւեկության հնարավորություն:*

Ադրբեջանական ապօրինի անցակետի վերաբերյալ հանրային կարծիքների հատման խաչմերուկում

2 ← «Ցանկացած քաղաքացի, ով գիտակցում է այդ վտանգները, պետք է խոսի այդ մարդկանց հետ ու ներկայացնի վտանգները: Ես համոզված եմ, որ այդ վտանգները գիտակցող որեւէ քաղաքացի չի համաձայնի թշնամու ապօրինի անցակետի գոյությանը»,- ասել է Ի. Ավանեսյանը:

Ճանապարհի վրա որեւէ անցակետ եւ զինյալ մարդ չպետք է լինի. Վիտյա Յարամիշյան



Արցախի Պետական համալսարանի պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վիտյա Յարամիշյանն այն կարծիքին է, որ այդ ճանապարհի վրա ընդհանրապես անցակետ չպետք է լինի եւ որեւէ պետության զինծառայող այնտեղ իրավունք չունի լինելու, սակայն այս պարագայում հատել անցակետը, թե ոչ՝ դժվարանում է պատասխանել, որովհետեւ բազմաթիվ հումանիտար հարցեր կան, որոնք շտապ լուծումներ են պահանջում:

«Դժվար հարց է, չգիտեմ: Ընդհանրապես պետք է բացվի ճանապարհը, ու ոչ մի ադրբեջանցի այնտեղ չպետք է լինի, որովհետեւ Արցախը առաջին օրը չէ, կամ առաջին տարին չէ, որ հատարարել է ի լուր ամբողջ աշխարհի իր անկախության մասին: 1988թ. ԼՂԻՄ մարզխորհրդի հայտնի որոշումից հետո, 1991թ. անկախության հռչակագրից եւ 30 տարվա պետականաշինությունից հետո կրկին վերադառնալ ու զրոյական մակարդակից սկսել, ինչ-որ անցակետեր տեղադրել, բռնի ուժով փորձել հետ՝ Ադրբեջանին վերաենթարկեցնել Արցախի ժողովրդին, սա անընդունելի է: Ճանապարհը միշտ պետք է բաց լինի եւ որեւէ զինյալ մարդ պետք է բացառվի այնտեղ՝ անկախ ազգությունից: Սակայն, այս պարագայում, եթե խոսքը վերաբերվում է հիվանդի կյանքը փրկելուն, նրան կարելի է անգամ օդով, հավքի թեւով էլ ուղարկել, որպեսզի նա բուժվի»,- ասել է Վ. Յարամիշյանը:

Կենցաղային հարցերը չպետք է գերադասենք մեր ինքնորոշման իրավունքից. Լաուրա Մարտիրոսյան

Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի տնօրեն, պատմության ուսուցչուհի Լաուրա Մարտիրոսյանն այն հաստատ համոզմունքն ունի, որ մենք պարտավոր ենք այս հողը ամեն գնով պաշտպանել ու ապրել այս հողի վրա, իսկ կենցաղային հարցերը չպետք է գերադասենք մեր ինքնորոշման իրավունքից:

Լաուրա Մարտիրոսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ որպես ԱՀ քաղաքացի եւ պատմության երկարամյա ուսուցչուհի, ապրելու իր կենսաբանաձեւը մեկն է՝ երբեք չլքել հայրենի տունը:

«Անցակետով անցնելն այս օրերին ես համարում եմ զուտ մարդկային, հումանիտար անհրաժեշտություն, սակայն երբեք չեմ ընդունի անցակետը՝ որպես ադրբեջանական կողմի իշխանություն մեր պետության ինքնիշխան տարածքների նկատմամբ: Ես գիտեմ միայն մի բան. հայը հազարամյակներ շարունակ ապրել է ու պետք է շարունակի ապրել այս հողի վրա: Սա մեր պապենական հողերն են, որոնց ժառանգները մենք ենք», - ասել է Լ. Մարտիրոսյանը:

Նրա խոսքով, անցակետով անցնել՝ չի նշանակում Ադրբեջանի դրոշի տակ խոնարհվել, որովհետեւ կան հումանիտար հարցեր, որոնք պետք է լուծում ստանան:

«Մենք պետք է զատենք մեր գերագույն նպատակը հումանիտար խնդիրներից: Գերագույն նպատակը անշեղ պետք է մնա, սակայն ժողովրդի մեջ մտածողության տարբեր մակարդակներ կան: Ընդհանրական մտածողության մեջ անհանգստություն կա: Մենք չպետք է մեր ազգային նպատակները որեւէ պարագայում ստորադասենք կենցաղային հարցերին: Մենք մեր ինքնորոշման իրավունքից չպետք է շեղվենք հարսանիքների կամ այլ կենցաղային պատրվակների անվան տակ անցնելով անցակետով: Միայն հիվանդների տեղափոխման եւ հումանիտար հարցերի լուծման նպատակով այցերն են, որ ծայրահեղ անհրաժեշտություն են»,- նշել է դպրոցի տնօրենը:

Անընդունելի եմ համարում ադրբեջանական անցակետով մեր հայրենակիցների տեղաշարժը. Դավիթ Ղահրամանյան

Լուսանկարիչ Դավիթ Ղահրամանյանն անընդունելի է համարել ադրբեջանական անցակետով քաղաքացիների տեղաշարժը եւ անձնական տվյալների ստուգումը, ինչը ջուր է լցնում թշնամու ջրաղացին, եւ կոչ է արել մեր հայրենակիցներին՝ չշեղվել պայքարի գաղափարից ու ուղուց:

«Նախ եւ առաջ, իշխանությունները պետք է կողմնորոշվեն: Բոլորս էլ հիշում ենք երկրի նախագահի վերջին տեսաուղերձը, որտեղ նա վստահեցնում էր, որ իշխանությունները չեն շեղվելու պայքարելու կամքից եւ հավատարիմ են մնալու հայտարարված կարմիր գծերի պահպանմանը, եւ դիմել էր միջազգային հանրությանը, այդ թվում՝ նաեւ Վ. Պուտինին՝ կտրուկ քայլերի դիմել՝ ապաշրջափակելու Բերձորի միջանցքը: Բնականաբար, անընդունելի եմ համարում ադրբեջանական անցակետով մեր հայրենակիցների տեղաշարժը եւ անձնագրերի ստուգումը, ինչը փաստորեն ջուր է լցնում թշնամու ջրաղացին: Պետք է շեշտը դնել նրա վրա, որ այդ տարածքներն օկուպացված են եւ Ադրբեջանի կողմից բոլոր տեսակի գործողություններն այդ ճանապարհի վրա ապօրինի են»,- ասել է Դ. Ղահրամանյանը:

Նա նշեց, որ ինքը, որպես ԱՀ քաղաքացի, ոչ մի պայմանով չի անցնի այդ անցակետով, եթե այնտեղ իրեն պետք է ստուգեն ադրբեջանցի օկուպանտները:

«Մեր հանրությանը խորհուրդ կտամ չտրվել իշխանությունների «գայթակղիչ» առաջարկներին եւ չշեղվել մեր պայքարի գաղափարից», - նշել է Դ. Ղահրամանյանը:

Ինքնակամ անցակետի գոյությունը օրինականացնելը հավասարազոր է նոր ցեղասպանության. Հովիկ Ավանեսով

Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի կովկասագիտության կենտրոնի ղեկավար, կովկասագետ Հովիկ Ավանեսովի կարծիքով՝ մեր բոլորի ջանքերը պետք է ուղղված լինի անցակետը ապամոնտաժելուն, իսկ ոչ էական նպատակներով շարժն անցակետով՝ այն դարձնում է օրինական, ինչը հավասարազոր է նոր ցեղասպանության:

Անդրադառնալով անցակետից օգտվելու հետ կապված հարցին՝ Հովիկ Ավանեսովը նշեց, որ հստակորեն պետք է արձանագրենք, որ անցակետով տեղաշարժը պետք է լինի բացառապես առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիների համար, այն էլ՝ Կարմիր խաչի կամ ռուս խաղաղապահների միջոցով:

«Մնացյալ պարագայում, բնականաբար, պետք է զերծ մնանք իրավականացնելու Ադրբեջանի ապօրինի անցակետը, որովհետեւ դրանով ստացվելու է, որ համաձայնվում ենք այն չակերտավոր ինտեգրացիայի քաղաքականությանը, որն առաջարկում է Ադրբեջանը: Դա հավասարազոր է լինելու նոր ցեղասպանության: Մենք պետք է հաշվի առնենք այս հանգամանքն ու հնարավորինս զերծ մնանք այն օգտագործելուց»,- ասել է Հ. Ավանեսովը:

Նա հասկանալի համարեց քաղաքացիների՝ իրենց հայրենակիցների հետ շփման անհրաժեշտությունը, բայց քանի գործում է այդ անցակետը, նման դեպքերը պետք է նվազագույնի հասցվեն, որպեսզի հավելյալ խաղաքարտեր չտանք Ադրբեջանին:

«Ադրբեջանն այդ տեսանյութերն օգտագործում է՝ ամբողջ աշխարհին ցույց տալու իր տոլերանտությունը հայերի նկատմամբ, սակայն դրա մասին խոսք լինել անգամ չի կարող: Նրանք անգամ ստուգում են Կարմիր խաչի մեքենաները, պարունակությունը, մարդկանց անձնագրերը: Աշխարհի որեւէ անկյունում, անգամ ամենահետամնաց վայրերում, Կարմիր խաչի կամ իրավազոր կազմակերպությունների մեքենաներին ահաբեկիչները չեն մոտենում: Իսլամական պետությունը, որն աշխարհի ամենածայրահեղ ահաբեկչական պետությունն է համարվում, երբեք որեւէ պետության տարածում Կարմիր մահիկի մեքենա չի կանգնեցրել, ստուգել»,-ասել է Հովիկ Ավանեսովը:

Նրա կարծիքով, պետք է հստակ հասկացնել միջազգային կազմակերպություններին, որ Ադրբեջանի ապօրինի գործողությունների վրա աչք փակելով՝ նրանք հավասարապես հանցագործներ են համարվում:

Եթե թողնում եւ գնում են, նշանակում է՝ հաշվի չեն նստում ամիսներ շարունակ միջանցքի բացման համար պայքարող մարդկանց որոշման հետ. Ազատ Ադամյան

Անհատ ձեռնարկատեր Ազատ Ադամյանը կարծում է, որ նրանք, ովքեր գնում են կամավոր, այլ ոչ թե առողջական խնդիրներից ելնելով, անտեսում եւ հաշվի չեն նստում այն մարդկանց որոշման ու կարծիքի հետ, ովքեր ամիսներ շարունակ պայքարում են միջանցքի ապաշրջափակման համար:

«Ակամայից ստացվում է, որ յուրաքանչյուր ոք, ով ադրբեջանցի սահմանապահ զորքերին ցույց է տալիս իր անձնագիրը, ուրեմն համաձայն է անցակետի առկայության հետ, բայց մարդիկ հաշվի չեն առնում, որ անցակետով անցնելու ընթացքում նրանց տվյալները հավաքագրվում են, եւ վաղը կամ մյուս օրը հնարավոր է պատերազմին մասնակցած քաղաքացիների տվյալները նույնականացնեն ու թույլ չտան հատել սահմանը, կամ՝ որպես հետախուզում հայտարարված անձի ձերբակալել ու իրենց կարծիքով արդար պատժելու համար բանտարկել կամ սպանել, իսկ դրա համար ոչ ոք պատասխանատվություն չի կրելու»,- ասել է Ազատ Ադամյանը:

Նրա խոսքով, անցակետը շահագործելու արդյունքում մենք աշխարհին ցույց ենք տալիս, որ Ադրբեջանը մեզ շրջափակման մեջ չի պահում եւ մենք ունենք ազատ տեղաշարժի հնարավորություն եւ իրավունք, ինչի մասին եւ պնդում է Ադրբեջանը:

«Եթե մարդ, առողջական խնդիրներով պայմանավորված, ստիպված է մեկնում Երեւան, իրենք էլ ուրախ չեն դրա համար, բայց ինչ-որ տեղ կարելի է հասկանալ, որ չգնալը մարդու կյանքի համար վտանգ է ներկայացնում, իսկ մենք տվյալ պահին կորուստներ ունենալ չենք կարող, մեզ համար յուրաքանչյուրի կյանքը թանկ է: Եթե մարդիկ գնում են այլ նպատակներով՝ հարսանիք, ծնունդ, կամ հանգստի, ես մտածում եմ, որ նրանք կարող են հրաժարվել այդ մտքից՝ հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, երբ շատերը չեն գնացել իրենց հարազատների հուղարկավորությանը, շատ ծնողներ ամիսներ շարունակ չեն այցելում իրենց որդիների շիրիմներին, չնայած հնարավորություն ունեցել են գրանցվել ու մեկնել Երեւան՝ անցակետը չհատելու համար, քանի որ հասկանում են, որ շահագործելով այդ անցակետը, այն լեգիտիմացնում ենք: Իմ շփումների ընթացքում եկել եմ այն եզրակացության, որ նման դեպքերը չեն ողջունվում հանրության կողմից: Եթե մարդիկ թողնում ու գնում են, նշանակում է՝ հաշվի չեն նստում այն մարդկանց որոշման ու կարծիքի հետ, ովքեր ամիսներ շարունակ պայքարում են միջանցքի ապաշրջափակման համար»,- եզրափակել է Ազատ Ադամյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Շարունակելու ենք պահպանել կրթության գերակայությունը. Նորայր Մկրտչյան

Արցախի շրջափակումը բազմաթիվ խնդիրներ է ստեղծել յուրաքանչյուր ոլորտի համար: Այն հատկապես իր բացասական ազդեցությունն է ունեցել կրթության ոլորտի, մասնավորապես՝ ուսումնական գործընթացի կազմակերպման վրա: Այս բոլոր դժվարություններով հանդերձ, ուսումնական տարին մոտենում է ավարտին:

Կրթության ոլորտում առկա խնդիրների, դրանց լուծումների եւ սպասվող բարեփոխումների մասին «Ապառաժ»-ը զրուցել է ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Նորայր Մկրտչյանի հետ:

- Պարոն Մկրտչյան, շուտով կլրանա ձեր պաշտոնավարման 100-րդ օրը: Ռազմական ու կրթական ոլորտները միմյանց հետ սերտ փոխկապակցված են, սակայն, այնուամենայնիվ, ավելի քան 30 տարի ռազմական ոլորտում գործունեություն ծավալելուց հետո, ինչպիսի՞ զգացողություններ ունեք կրթության ոլորտի պատասխանատու պաշտոնում նշանակվելուց հետո:

- Չնայած բավական երկարատեւ ժամանակահատված անցկացրել եմ զինված ուժերի շարքերում, սակայն երբեւիցե չեմ կտրվել կրթական ոլորտից: Ծառայության բերումով մշտապես համագործակցել ենք, եւ փոքրիշատե քաջատեղյակ էի բոլոր երեւույթներին ու գործընթացներին, որոնք առկա են ԿԳՄՍ նախարարությունում, ուստի ինձ համար, կարելի է ասել՝ նորություն պարունակող ոչինչ չկար, սակայն բավականին ժամանակ էր պետք, որպեսզի լիարժեքորեն ծանոթանամ ոլորտին: Եթե միայն նախարարության անվանումից հետեւություն կատարեք, պիտի հասկանաք՝ ինչպիսի լայն դաշտ ունի՝ բարձրագույն կրթություն, գիտություն, հանրակրթություն, մշակույթ եւ սպորտ: Այս բոլոր ուղղություններում մենք ձեռնարկում ենք եւ մինչեւ իմ նշանակումը ձեռնարկվում էին լայնածավալ քայլեր, որոնք վերջին հաշվով պիտի էապես ազդեին այս բոլոր ոլորտների որակական առաջընթացին: Ճիշտն ասած, չեմ հաշվել, թե որերորդ օրն եմ զբաղեցնում այս պատասխանատու պաշտոնը, սակայն հավաստիացնում եմ, որ իմ ուժերի ներածին չափով եւ դեռ ավելին անելու եմ, որպեսզի իմ ղեկավարած գերատեսչությունն իր ամբողջ անձնակազմով, իր ենթակա կառուցվածքային ստորաբաժանումներով հասնի հաջողությունների այս պատասխանատու ոլորտում:

- Ձեր պաշտոնավարումը համընկել եւ շարունակում է Արցախի Հանրապետության համար ծանր ժամանակաշրջանի հետ: Բազմաթիվ դժվարություններով հանդերձ՝ ուսումնական տարին գրեթե մոտենում է իր ավարտին: Ինչպե՞ս կամփոփեք այն:

- Տարին, ինչպես եւ հետպատերազմյան տարիները, եղել է բավականին բարդ, լեցուն տարբեր իրադարձություններով: Ինչպես գիտեք, 44-օրյա պատերազմից հետո անմիջապես վրա հասավ հետպատերազմյան ծանր փուլը, որի բացասական հետեւանքներն առ այսօր առկա են թե՛ հոգեբանական դաշտում, թե՛ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ասպարեզում: Բացի այդ, պետք է նշենք նաեւ համավարակի առկայությունը, շրջափակումը. այս բոլորն, իրոք, իրենց ազդեցությունն են թողնում ե՛ւ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման վրա, ե՛ւ ընդհանրապես՝ կրթության որակի վրա, սակայն ի շնորհիվ մեր գերատեսչության անձնակազմի, բոլոր աշխատակիցների, ուսուցչական հանրույթի ջանքերի՝ կարողացել ենք կատարել հնարավորինս, որպեսզի ապահովենք կրթության ոլորտի գործունեությունը՝ ելնելով այն համոզմունքից, որ կրթության գերակայությունը վեր է ամեն ինչից:

Այսօր ստանում ենք բազմաթիվ բացասական արձագանքներ, դժգոհություններ մեր հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների կողմից, հատկապես նրանց կողմից, ում երեխաները սովորում են բուհերում կամ հանրակրթական հաստատություններում, որ խիստ վերաբերմունք է ցուցաբերվում, հաշվի չի առնվում ստեղծված իրավիճակը եւ պահանջվում է ավելի շատ, այն դեպքում, որ կարելի է մեղմ վերաբերմունք ցուցաբերել թե՛ կենտրոնացված, թե՛ միասնական քննությունների ժամանակ՝ հաշվի առնելով իրավիճակը, դիմորդների կամ աշակերտների բարոյահոգեբանական ճնշված վիճակը: Մենք հաստատակամորեն ընտրել ենք այնպիսի քաղաքականություն, որ երբեւիցե չպետք է զիջումների գնալ որակյալ կրթության ապահովման գործում, որովհետեւ դրա այլընտրանք չկա ու չի կարող լինել, ուստի շարունակելու ենք կրթության գերակայությունը պահպանել:

- Որո՞նք են այն հիմնական խնդիրները, որոնք հասցրել եք նկատել ոլորտում:

- Չէի ասի թերություն կամ բաց, այլ՝ հարցեր, որոնք կուտակվել են տարիների ընթացքում: Օրինակ՝ կադրային խնդիրները, հատկապես բնագիտական առարկաների ուսուցիչների պակասն այսօր զգացվում է: Խնդիրներ կան ներառական կրթության ոլորտում՝ ներգրավված երեխաների հետ աշխատող հատուկ մանկավարժների, հոգեբանների, սոցիալական մանկավարժների պատրաստվածության հետ կապված: Ունենք խնդիր՝ կապված նյութատեխնիկական համալրվածության հետ, այսինքն՝ մեր դպրոցների մեծ մասը դեռեւս չունի ժամանակակից լաբորատիորիաներ, որոնց միջոցով պետք է ապահովվի կրթության բարձր որակ: Բավականին լուրջ խնդիրներ կան շենքային պայմանների հետ կապված՝ տարբեր շրջաններում եւ տարբեր դպրոցներում, որտեղ անհրաժեշտ է իրականացնել հիմանորոգումներ: Խնդիրները շատ են. աշխատելու ենք աստիճանաբար լուծումներ գտնել եւ կարգավորել դրանք:

- Թշնամին կարծես զիջել չի պատրաստվում: Առջեւում ձմեռ է, որն ըստ երեւույթին ավելի խիստ սոցիալ-տնտեսական պայմաններում ենք անցկացնելու, քան նախկինն էր: Հաշվի առնելով այդ խնդիրները եւ հատկապես ջեռուցման խնդիրը, ինչպե՞ս եք պլանավորում նոր ուսումնական տարին: Ի՞նչ քայլեր են նախատեսվում կրթական գործընթացը հնարավորինս արդյունավետ եւ անխափան կազմակերպելու համար:

- Իհարկե, անելու ենք ամեն ինչ, որպեսզի ուսումնական գործընթացի խափանումներ չլինեն: Հետպատերազմյան ժամանակաշրջանում հաջողվել էր ջեռուցման համակարգերի մի մասը փոխարինել: Մեծ քանակի գազի ջեռուցման համակարգեր փոխվել է տարբեր դպրոցներում, սակայն ունենք եւս 37 դպրոց, որտեղ պետք է իրականացվի այդ համակարգերի փոխարինումը: Այլընտրանքային վառելանյութերի շնորհիվ իրականացվելու է դպրոցների ջեռուցումը: Արդեն իսկ սկսել ենք նախապատրաստվել, որպեսզի ձմռան շեմին եւ ընթացքում պատրաստ լինենք եւ ջեռուցման հետ կապված խնդիրներ չառաջանան:

- Շուտով ավարտին կմոտենան միասնական քննությունները: Բավականին դիմորդներ կան, ովքեր դիմել են ՀՀ բուհեր: Ի՞նչ է սպասվում նրանց:

- Մենք համագործակցում ենք ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ, ԳԹԿ-ի հետ: Նրանց համապատասխան դրական վերաբերմունքի պատրաստակամության շնորհիվ մենք ներկա դրությամբ խնդիրներ չունենք միասնական քննությունների հետ կապված: Այն ամբողջությամբ իրականացվում է այստեղ: Նույնը պետք է նշեմ նաեւ ներբուհական քննությունների մասին: Իսկ ինչ վերաբերում է ուսանողների ՀՀ տեղափոխմանը, ապա նշենք, որ խնդիրներ չեն լինելու: Կենտրոնացված կարգով իրականացվելու է նրանց եւ ուղեկցող ծնողների տեղափոխումը, ովքեր դիմել են ՀՀ բուհեր եւ ընդունվել:

- Արցախի կառավարությունը՝ ինչպես ամեն տարի, այս տարի եւս սահմանել է ՀՀ բուհերում նպատակային անվճար տեղեր Արցախի ուսանողների համար, որն ըստ էության ներդրում է մտավոր կապիտալում, հետագայում այդ կապիտալն ի օգուտ մեր պետության զարգացման օգտագործելու համար: Ձեր կարծիքով՝ որքանո՞վ են այս ծախսերը փոխհատուցվում հետագայում եւ որքանո՞վ են արդարացված՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ուսանողներից շատերն այդպես էլ չեն վերադառնում: Խոսքը վերաբերում է հատկապես բժիշկներին, որոնք նախընտրում են իրենց գործունեությունը շարունակել ՀՀ-ում, սակայն որոնց կարիքն այսօր ունի Արցախը:

- Ծանոթ էի իրավիճակին անգամ մինչեւ այս պաշտոնը զբաղեցնելը: Ցանկացած ներդրում մտավոր կապիտալում արդարացված է նախ եւ առաջ այն պատճառով, որ մենք օգնում ենք, որպեսզի ուսանողները չզգան ֆինանսական խնդիրներ, կենտրոնական իրենց ուսման վրա: Մի որոշ մասը, անշուշտ, վերադառնում է, սակայն, համաձայն եմ Ձեր այն մտքի հետ, որ մի որոշ մասն էլ չի վերադառնում, հատկապես՝ բժշկական ոլորտի մասնագետները: Այստեղ խնդիր կա նաեւ իրավակարգավորումների հետ կապված: Աշխատանքներ են տարվելու նաեւ այս ուղղությամբ, որպեսզի սահմանենք այնպիսի լծակներ, մեխանիզմներ, որոնց կիրառումը թույլ կտա նման դեպքերը հասցնել նվազագույնի:

- Այսօր եւ ապագայում Արցախի Հանրապետությանն անհրաժեշտ են ազգային գաղափարախոսությամբ զինված, խելացի քաղաքացիներ: Այս առումով ակներեւ են ՀՀ-ում տեղի ունեցող ցավալի գործընթացները, մասնավորապես՝ Հայոց պատմության աղավաղումը դասագրքերում, Հայոց ցեղասպանության մերժումը: Ձեր կարծիքով՝ որո՞նք են անելիքներն այս պարագայում եւ արդյո՞ք կարող ենք հեռու մնալ այս գործընթացներից եւ ունենալ սեփական մոտեցում: Ի՞նչ է սպասվում «Հայոց եկեղեցու» պատմություն եւ ՆԶՊ առարկաներին, որոնք կարծես թե եւս աստիճանաբար դուրս են մղվում ՀՀ դպրոցներից: Ո՞րն է մեր դիրքորոշումը:

- Չեմ ուզում կարծիք հնչեցնել, թե ինչպիսի գործընթացներ են տեղի ունենում ՀՀ գիտակրթական ոլորտում, սակայն կարող եմ նշել, որ մենք քայլեր ենք ձեռնարկում, որպեսզի նոր ուսումնական տարին սկսելուն պես ավելի բարձրացնենք հայագիտական ուղղվածության առարկաների դասավանդման աստիճանը եւ հագեցնենք ծրագրերը: Օրինակ, նոր ուսումնական տարում նախատեսվում է 8-9-րդ դասարաններում որպես նոր առարկա մտցնել «Արցախի պատմություն» առարկան: Ազգային եկեղեցու վերաբերյալ նոր ծրագրային նյութեր են նախապատրաստվում ներդնելու նպատակով: Փակագծեր չբացելով՝ նշեմ, որ գործնական այլ քայլեր եւս նախատեսվում են, որոնք այս պահին գտնվում են քննարկումների փուլում: Դրանց մասին կտեղեկացնենք առաջիկայում:

- Արցախի կառավարությունում քննարկվում է կրթական բարեփոխումների նոր հայեցակարգ: Ի՞նչ է այն իրենից ներկայացնում:

- ԱՀ պետական նախարարի հրամանով ստեղծվել է հանձնաժողով, որը պետք է զբաղվի հանրակրթության ոլորտի բարեփոխումների հարցով: Անդրանիկ նիստը հրավիրելուց հետո կազմել ենք խնդրահարույց հարցերի ծավալուն շրջանակ: Ներկա պահին ինձ մոտ առկա են նմանատիպ շուրջ 60 հարցեր, որոնք վերաբերում են հանրակրթությանը: Այս հարցերը պետք է քննարկվեն այդ հանձնաժողովի կազմից ձեւավորված ենթահանձնաժողովներում եւ դրանից հետո ստանան իրենց տրամաբանական շարունակությունը՝ օրենքների, կառավարության որոշումների, կրթության նախարարի հրամանների ու այլ իրավական ակտերի տեսքով, որով կկարողանանք էլ ավելի բարելավել կրթության ոլորտը:

- Եթե ամփոփեք ուսումնական պրոցեսի կազմակերպման հետ կապված խնդիրները եւ հարցերը, ըստ Ձեզ՝ որո՞նք կհամարեք ոլորտի առաջնային խնդիրները եւ արդյո՞ք հնարավորություն կա դրանց լուծումներ տալ:

- Խնդիրների շրջանակը բավականին մեծ է, առաջնահերթություններ՝ վարանում եմ նշել, որովհետեւ բոլորն էլ առաջնահերթ են, կարեւոր են ու ածանցված են մեկը մյուսին: Պետք է ունենալ ռազմավարություն եւ այդ ռազմավարության հիման վրա ծրագրային մեթոդական մշակումներ իրականացնել եւ դրանք ներդնել կրթական համակարգում: Ներդնելուց հետո ծագում է մասնագետների վերապատրաստման խնդիրը, այսինքն՝ բոլոր հարցերը փոխկապակցված են իրար: Վերապատրաստման խնդրի հետ միաժամանակ առաջանում է կառավարման խնդիր: Գոյություն ունի նաեւ տեխնիկական հագեցվածության խնդիր: Մենք աշխատում ենք նորագույն տեխնոլոգիաներ ներդնել կրթության ոլորտում, որպեսզի կարողանանք ավելի քիչ ժամանակ եւ ռեսուրսներ ծախսելով հասնել ցանկալի արդյունքի:

→ 5

Տնտեսվարողների բարձր իրավագիտակցությամբ ավելի հեշտ կհաղթահարվեն դժվարությունները. Լեւոն Սարգսյան

Հունիսի 6-ից Արցախի Հանրապետությունում սկսվել է մի խումբ ապրանքների համար նախատեսված կտրոնների տրամադրման գործընթացը: Այդ ապրանքների որակի եւ գների վերահսկման հետ կապված խնդիրների մասին «Ապառաժ»-ը զրուցել է ԱՀ պետական տեսչությունների կառավարման կոմիտեի նախագահ Լեւոն Սարգսյանի հետ:

- Պարոն Սարգսյան, շուկայում ժամանակ առ ժամանակ հայտնվում են անորակ ապրանքներ, հատկապես՝ մրգեր եւ բանջարեղեն: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում նման դեպքերը բացառելու համար եւ ինչո՞ւ է անորակ ապրանքը հայտնվում շուկայում:

- Դեկտեմբերի սկզբից բոլորս ենք ականատես, որ շատ քիչ քանակությամբ ապրանք է հասցվում ԱՀ, այն էլ ռուս խաղաղապահների միջոցով՝ հումանիտար ճանապարհով, եւ այո՛, ժամանակ առ ժամանակ շուկայում հայտնվում է անորակ ապրանք, որի պատճառներից են եղել ինչպես սկզբնական գնորդներից գնված ապրանքի մի մասի ոչ որակյալ լինելը, այնպես էլ տեղափոխման ժամանակ ջերմաստիճանի ցածր, որոշ ժամանակ՝ բարձր լինելու դեպքերը: Բայց պետք է նշեմ, որ անգամ մինչ շրջափակումը միրգ-բանջարեղեն ներմուծողներն իրենց ապրանքի 10 տոկոսը չէին հաշվառում, քանի որ այն համարվում էր որպես տվյալ ծավալի մեջ այն տոկոսը, որն օբյեկտիվորեն կորցնում էր իր որակը եւ ենթակա չէր վաճառքի: Մեր պարագայում այդ տոկոսը շատ քիչ է, բայց, միեւնույնն է, ապրանքի քիչ լինելու պատճառով անգամ 3 տոկոսը, որի որակական հատկանիշները ցածր են, մի շարք գնորդների համար դառնում է 100 տոկոս: Արդեն մի քանի ամիս է՝ պետական կազմակերպությունն է պատվիրում մի շարք ապրանքներ, իսկ տեղափոխումը շարունակվում է իրականացվել ռուս խաղաղապահների միջոցով՝ հումանիտար ճանապարհով, եւ դա թույլ է տալիս, որ ցանկացած խնդրի առկայության դեպքում հետագծելիության սկզբունքով պարզենք տվյալ խնդրի առաջացման օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառները: Բայց անկախ դրանից, ԱՀ պետական տեսչությունների կառավարման կոմիտեի կողմից ապրանքները ԱՀ հասնելուն պես ստուգվում են յուրաքանչյուրի անվտանգության ցուցանիշները: Երբեմն ունենում ենք դեպքեր, երբ այդ ստուգումների արդյունքում կանխարգելվում է տվյալ ապրանքի վաճառքը, եւ այն շուկայում չի իրացվում:

- Շուկայում վաճառվող ապրանքը նաեւ երբեմն թանկ է սահմանվածից: Ինչպե՞ս եք վերահսկում տրամադրվող եւ վաճառվող ապրանքների գները, որոնք երբեմն գերազանցում են խանութներում փակցված գնային սանդղակները:

- Համաձայն ԱՀ կառավարության N 70-Ն որոշման՝ ապրանքների առավելագույն գինը սահմանվում է հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Ստեփանակերտ քաղաքում վերահսկողություն է իրականացվում ինչպես հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովի, այնպես էլ պետական եկամուտների կոմիտեի եւ պետական տեսչությունների կառավարման կոմիտեի կողմից: Շրջկենտրոններում այդ վերահսկողությունն իրականացվում է պետական եկամուտների կոմիտեի կողմից, իսկ համայնքներում՝ վարչակազմների եւ համայնքապետարանների: Այս մարմինների կողմից կազմված բոլոր արձանագրությունները պետք է ուղարկվեն պետական տեսչությունների կառավարման կոմիտե վարչական վարույթ հարուցելու եւ հետագա ընթացքավորում իրականացնելու համար: Մեր կողմից, որպես պետական լիազոր մարմին, բացի Ստեփանակերտ քաղաքում իրականացված դիտարկումներից, դիտարկումներ են իրականացվել նաեւ շրջաններում եւ մի շարք համայնքներում, որոնց արդյունքում ունենք հարուցված 142 վարչական վարույթ, որի մի մասն ընթացքի մեջ է, իսկ մյուս մասով կայացվել են վարչական տույժ կիրառելու որոշումներ: Ընդհանուր տույժի գումարային չափն այս պահին գերազանցում է 7 միլիոն դրամը: Սրանք այն պետական եւ վարչական լծակներն են, որոնք գտնվում են մեր լիազորության շրջանակներում:

- Ստեղծված պայմաններից ելնելով՝ ինչպե՞ս եք փորձում բարելավել եւ արդյունավետ դարձնել ձեր աշխատանքը: Արդյո՞ք կիրառվում են նոր մոտեցումներ:

- Ինչպես նշեցի, մեր կառույցն իրականացնում է բազմապրոֆիլ տեսչական գործառույթներ, որոնք կարգավորվում են հստակ իրավական ակտերով, եւ ռազմավարական տեսանկյունից՝ մեր մոտեցումները պետք է համընկնեն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կանոնակարգերին: Իսկ ընթացիկ, փաստացի գործնական աշխատանքներում՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր օր շուկան փոխվում է եւ քաղաքացիների կենսագործունեության ընթացքում առաջանում են նոր իրողություններ, լուծում ենք նոր խնդիր եւ մշտապես փորձում ենք մեր աշխատանքն ու մոտեցումները համահունչ դարձնել տվյալ պահի համար անհրաժեշտ քայլերին:

- Որո՞նք են այն հիմնական դժվարությունները, որոնց բախվում եք Ձեր աշխատանքում:

- Ընդհանուր առմամբ՝ նման աշխատանքները հեշտ չեն, բայց դժվարությունները մեզ համար հաղթահարելի են, քանի որ մենք առաջնորդվում ենք օրենքով եւ իրավական ակտերով մեզ տրված լիազորությունների եւ պարտականությունների շրջանակում՝ հետեւելով այդ պահանջների պահպանմանը: Բայց դժվարություններն ավելի հեշտ կհաղթահարվեն, եթե մի շարք տնտեսավարողների մոտ ավելի բարձր լինի հատկապես քաղաքացիական իրավագիտակցությունը, որպեսզի առաջին հերթին նրանք գիտակցեն, որ սպառողների իրավունքների պաշտպանումը կախված է տնտեսավարող սուբյեկտի վարքագծից: Այս պարագայում ստիպված չենք լինի սպառողների իրավունքների պաշտպանման համար կիրառել այնպիսի սահմանափակումներ, որոնք կհասցնեն անգամ տնտեսավարող սուբյեկտների գործունեության կասեցմանը: Ունենք տնտեսավարող սուբյեկտների գործունեության կասեցման 3 դեպք, իսկ տասնյակ տնտեսավարող սուբյեկտների մոտ 1 անգամ նշանակվել է տուգանք, իսկ նույն տնտեսավարողների մոտ երկրորդ անգամ խախտում հայտնաբերվելու դեպքում կկասեցվի նրանց գործունեությունը:

- Ձեր աշխատանքի նկատմամբ զգո՞ւմ եք հանրային վերահսկողություն: Արդյո՞ք ստանում եք բողոքներ բնակչության կողմից: Ի՞նչ բնույթի են դրանք եւ ինչպե՞ս են լուծվում:

- Այո՛, մենք մշտապես կապի մեջ ենք հասարակության հետ, եւ ունենք թեժ գիծ, որի մասին տարբեր հարթակներով տեղեկացվել է բնակչությունը: Ի հայտ եկած խնդիրների լուծման ժամանակ օգտագործում ենք մեր աշխատանքային ռեսուրսները: Իհարկե, բնակչության հետ համագործակցությունը ոչ միայն կարեւոր է, այլեւ՝ խիստ անհրաժեշտ:

- Որպես վերջաբան, ի՞նչ կցանկանայիք փոխանցել հասարակությանը:

- Կարծում եմ ՁԼՄ-ներին տված հարցազրույցներն ու սոցիալական տարբեր հարթակները հենց այն դասական միջոցներն են, որոնց միջոցով կապ է ստեղծվում հասարակության հետ: Իհարկե, կան հարցեր, որ անհրաժեշտ է եւս մեկ անգամ կարեւորել, որոնցից մեկն էլ այն է, որ մեր քաղաքացիներն առաջին հերթին թույլ չտան, որ տնտեսավարող սուբյեկտները խախտեն իրենց իրավունքները, համագործակցեն պետական լիազոր մարմինների հետ, եւ միայն այդ պարագայում պետական մարմինը կկարողանա լիարժեք կանխարգելել սպառողների իրավունքների խախտումները, քանի որ այլ արդյունք է լինում, երբ քաղաքացին անտարբեր է իր կենսական իրավունքների պաշտպանության հարցում, եւ մեկ այլ կանխարգելող արդյունք է, երբ ինչպես քաղաքացին, այնպես էլ համապատասխան պետական մարմինը, իրար հետ համագործակցելով պայքարում են նման երեւույթների դեմ:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Շարունակելու ենք պահպանել կրթության գերակայությունը. Նորայր Մկրտչյան

4 ← ***- Այս պայմաններում կարեւոր է նաեւ հմուտ եւ բանիմաց մասնագետների դերը դպրոցներում: Ի՞նչ քայլեր են արվում այս ուղղությամբ:***

- Միանշանակ տարբեր առարկաներից ուսուցիչների վերապատրաստման եւ ատեստավորման գործընթացի մեկնարկը շուտով կտրվի: Այն ամբողջությամբ պլանավորված է եւ իրականացվելու է մինչեւ ուսումնական տարվա սկիզբը՝ այն հաշվարկով, որպեսզի բոլոր ուսուցիչները կարողանան վերապատրաստվել ու ատեստավորվել: Ուշադրություն ենք դարձնելու նաեւ նոր ծրագրերի մշակմանը: Կարեւորվելու է գիտակրթական ոլորտի ակտիվացումը, հատկապես այն միտումով, որ գիտությունը լայն տեմպերով իր տեղը գտնի բուհերում, այսինքն՝ բուհերում գիտությամբ զբաղվելը դառնա ինտենսիվ եւ օրինաչափ երեւույթ:

- Խոսեցիք բուհերի մասին: Հասարակության տարբեր շերտերում այն կարծիքը կա, որ Խորհրդային Միության կրթական համակարգն ավելի արդյունավետ էր, իսկ բոլոնյան համակարգը զիջում է իր արդյունավետությամբ: Տեսնո՞ւմ եք ոլորտում բարեփոխումների կարիք եւ արդյո՞ք ձեռնարկվում են քայլեր:

- Ընդհանրապես սովետական համակարգը, իրոք, բազմաթիվ դրական կողմեր ուներ, եւ յուրաքանչյուր ոք, ով բախտ է ունեցել անցնել այդ ուսուցման համակարգով, կրթվել այդ համակարգով, երբեւիցե չի հանդգնի բացասական կարծիք արտահայտել համակարգի մասին: Ամեն դեպքում՝ գիտենք, որ կրթությունը եւ տեխնիկան զարգանում են խելահեղ տեմպերով, ուստի համաշխարհային գիտական կենտրոններում օգտագործվող առաջավոր համակարգերը եւ կրթական գործընթացները պետք է որդեգրենք, յուրացնենք եւ ներդնենք մեր կրթական ոլորտում: Այստեղ պետք է խոսք գնա ոչ միայն զուտ բոլոնյան կամ սովետական համակարգերով առաջնորդվելու, այլ ամեն համակարգից կարեւորն ու արդյունավետը յուրացնելու մասին, որը մեր կրթական համակարգում ցույց է տալու լավ ու դրական արդյունքներ, ապահովելու է առաջընթաց:

- Եվ վերջում, որպես ամփոփում՝ ո՞րն է ձեր պատգամը Արցախի ուսուցիչներին եւ աշակերտներին:

- Մենք նախապատրաստում ենք նոր ուսումնական տարում շրջանառության մեջ դնել ուսուցչի վարքականոնը եւ աշակերտի վարքականոնը, որտեղ սահմանվելու են նրանց էթիկական նորմերը, վարվեցողությունը, պատասխանատվության աստիճանն է ամրագրվելու: Մշակել ենք պայմանագրի նոր ձեւ, որը ստորագրվելու է աշակերտի ծնողի եւ դպրոցի միջեւ, եւ ըստ որի՝ այդ իրավափոխհարաբերությունները կարգավորվելու են: Մինչեւ հիմա խոսվում է աշակերտների իրավունքների մասին, բայց երբեւիցե այդ նույն չափ չի խոսվել աշակերտների պարտականությունների մասին:

Աշակերտի պարտականություն ասելով՝ պետք է հասկանանք նաեւ ծնողի պարտականությունները, որովհետեւ այս կամ այն չափ ծնողը պարտավորություն է կրում եւ պարտականություններ ունի իր երեխայի համար, ով սովորում է հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Ես ցանկանում եմ, որպեսզի ուսուցիչները շարունակեն իրենց հայրենանվեր առաքելությունը, իրենց նվիրյալ ծառայությունը ժողովրդին, իսկ մենք էլ պատրաստ ենք անել հնարավորը, որպեսզի վերականգնվի հայ ուսուցչի երբեմնի փառքն ու հեղինակությունը, որը դարեր ի վեր գոյություն ուներ մեր հասարակության մեջ: Աշակերտներին մաղթում եմ՝ լինեն կարգապահ, լսեն ուսուցիչներին, լավ սերտեն իրենց դասերը, դասերին ներկայանան պատրաստ, որպեսզի կարողանան գիտությամբ այդ ոլորտում հասնեն նորանոր հաջողությունների, որովհետեւ փրկությունը ոչ միայն ուժեղ բազուկ ունենալու մեջ է, այլեւ՝ պայծառ միտք, իսկ դրա համատեղումը գրեթե անպարտելի է դարձնելու մեր ազգին:

Հարցազրույցը՝ Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Շրջափակումը Աստղաշենում խթանել է հողագործությունը

Արցախի բացառիկ ու առեղծվածային գյուղ Աստղաշենը հայտնի է սստղակերպ քարերի առկայությամբ, որոնք գետնին հայտնվում են հատկապես անձրեւներից հետո, որտեղից էլ գյուղն ստացել է իր անվանումը: Գյուղի անվանումն ի սկզբանե եղել է Քարաղբյուր, հետագայում այն անվանափոխել են ադրբեջանցիները, իսկ 1988թ. գյուղն անվանվել է Արցախաշեն, հետագայում՝ խորհրդանշորեն գյուղն անվանվեց Աստղաշեն:

Գյուղի տարածքում հայտնաբերվել են բրածո կենդանիներ եւ փայտի քարացած մնացորդներ, իսկ աստղաքարերը 165-145 մլն «տարեկան» են: Ըստ մասնագետների, այդտեղ նախկինում օվկիանոս է եղել, իսկ աստղաձեւ բրածոներն իրականում ծովաշուշանների բուսատեսակներին պատկանող աստղաձեւ ոսկրիկներ են: Առեղծվածային քարաստղերը գյուղը դարձրել են զբոսաշրջային ուղղություն, իսկ տարածքը, որպես պատմամշակութային նշանակության վայր, գտնվում է պետության վերահսկողության տակ: Մինչ պատերազմը աշխարհի տարբեր երկրներից մարդիկ էին գալիս տեսնելու եւ աստղեր հավաքելու, սակայն պատերազմից հետո զբոսաշրջիկների թիվն էապես կրճատվել է: Այժմ Աստղաշենի հյուրերը տեղացի զբոսաշրջիկներն են:

Գյուղը գտնվում է Ասկերանի շրջանում՝ Ստեփանակերտից 20 կմ հեռավորության վրա: Բացի աստղաքարերից, գյուղը հարուստ է նաեւ եկեղեցիներով, սրբատեղիներով: Համայնքի տարածքում են Սուրբ Գեւորգ եկեղեցին (19-րդ դարի կես), որտեղ ամեն կիրակի մատուցվում է պատարագ, Ֆռանգյուլաց, Կապենխաչ, Չմանենխաչ, Երե նահատակ սրբատեղիները:

Գյուղ տանող ճանապարհը պատերազմից հետո ասֆալտապատվել է, իսկ ներհամայնքային ճանապարհները սալապատված են:

Գյուղում գործում է գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, մանկապարտեզ, արվեստի դպրոց, նորակառույց միջնակարգ դպրոց՝ տիպային բոլոր պայմաններով: Գյուղի տարածքում կառուցվում են բնակելի տներ՝ տեղահանված քաղաքացիների համար:

Պատերազմի ընթացքում գյուղին վնասներ չի հասել, իսկ պատերազմից հետո գյուղում վերաբնակեցվել են



տասնյակ տեղահանված ընտանիքներ: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է համայնքի ղեկավար Արթուր Գրիգորյանը:

«Բոլոր տեղահանված եւ համայնքում հաստատված ընտանիքներն ապահովվել են բնակարաններով, որոնց մի մասը կապիտալ վերանորոգված է: Նրանք բոլորն էլ հարմարվել են գյուղի հասարակությանը: Նրանց մի մասն աշխատում է շինհրապարակներում, իսկ մի մասը տարբեր վարձու աշխատանքներ է կատարում: Տեղահանվածները հիմնականում Հադրութի շրջանից են. ունենք տեղահանվածներ նաեւ Ավետարանոց, Ջրաղացներ եւ Տիգրանակերտ համայնքներից»,- ասել է համայնքի ղեկավարը:

Գյուղացիների հիմնական զբաղմունքը անասնապահությունն է եւ հողագործությունը: Վերջինս ավելի զարգացած է համայնքում: Գյուղում ընդամենը մի քանի անասնապահներ կան:

«Չնայած շրջափակման առաջացրած խնդիրներին ու խոչընդոտներին, այս տարվա ընթացքում կատարվել է 305 հա գարու եւ ցորենի աշնանացան, 50 հա արեւածաղկի, եգիպտացորենի գարնանացան: Վարելահողերի 90-100%-ը ամբողջությամբ մշակվել է»,- նշել է Ա. Գրիգորյանը:

Նրա խոսքով, շրջափակումը խթանել է հողագործության ընդլայնմանը:

«Մարդիկ զարկ են տվել բանջարաբոստանային կուլտուրաների մշակությանը: Հիմնականում անմշակ տնամերձ հողատարածքներ չեն մնացել, բոլորը մշակվել են գյուղացիների կողմից, որպեսզի իրենք իրենց պարենային ապահովվածության խնդիրը կարողանան լուծել: Ջեռուցման հետ կապված խնդիրներով պայմանավորված՝ ջերմոցային գյուղատնտեսությամբ զբաղվում է 2 ընտանիք, ովքեր աճեցնում են կանաչի, լոլիկ եւ վարունգ»,- ասել է Ա. Գրիգորյանը:

Անդրադառնալով վերջին շրջանում ամբողջ հանրապետության տարածքում առատ տեղումների եւ կարկտահարությունների պատճառած վնասներին, համայնքի ղեկավարը նշել է, որ բարեբախտաբար ի համեմատ հանրապետության ընդհանուր տարածքին հասցված վնասների՝ Աստղաշենի տարածքին լուրջ վնասներ չի հասցրել տեղացած կարկուտը:

Ա. Գրիգորյանի խոսքով, գործազրկության մակարդակը գյուղի երիտասարդության շրջանում մեծ չէ:

«Այսօրվա դրությամբ երիտասարդների մի մասն աշխատում է ուժային կառույցներում, իսկ մի մասը՝ նոր հիմնադրված ինտենսիվ այգիներում: Երեւի գյուղի երիտասարդության մոտ 20%-ն է, որ չունի հիմնական աշխատանք, մյուսները կարողանում են աշխատել եւ ապահովել իրենց ընտանիքներին», - նշել է համայնքի ղեկավարը:

Խոսելով գյուղի առաջնային խնդիրների մասին, համայնքապետը նշեց ոռոգման ջրի բացակայության եւ մշակույթի տան վերանորոգման անհրաժեշտության հարցերի մասին:

«Հիմնական խնդիրը ոռոգման ջրի բացակայությունն է: Մշտական խմելու ջրով ապահովված է գյուղը, որն օգտագործվում է նաեւ տնամերձերի ոռոգման նպատակով: Լուծում պահանջող խնդիրներից է նաեւ մշակույթի տան նորոգման հարցը, որի մասին տեղեկացրել ենք կառավարությանը: Շատ գումարներ են ծախսվում նոր շենքեր կառուցելու համար: Բազմիցս նշել ենք, որ ափսոս է այդ շենքը. ակումբը եւ գրադարանը ենթակա են կապիտալ վերանորոգման»,- եզրափակել է Ա. Գրիգորյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արցախի շրջափակման այս օրերին նույնիսկ ամենաչնչին հաղթանակները կարեւոր են մեզ համար

Ս.թ. հունվարի 13-ից մեկնարկել էլ ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի պատանեկան հարցերի հանձնախմբի կողմից կազմակերպված «Պատանի ախոյան» մրցաշարը, որը տեւել է մինչեւ ապրիլի 28-ը: Մրցաշարի նպատակը պատանիների դաստիարակության գործին նպաստելն էր, որին իրենց մասնակցությունն են բերել Հայաստանի, Արցախի, Սիրիայի, Լիբանանի, Նոր Զուղայի, Թեհրանի, Հունաստանի, Ֆրանսայի, Հոլանդայի, Արեւմտյան ԱՄՆ-ի ՀՅԴ պատանեկան միությունները, ընդհանուր՝ 53 մասնակցով:

Մրցաշարին ՀՅԴ Արցախի պատանեկան միությունները ներկայացնում էին՝ Վանքի մասնաճյուղից Մարթա Չիլինգարյանը եւ Անգելինա Հայրապետյանը: Վերջինս «Դրվագի պատմում» ասպարեզում գրավել է առաջին մրցանակային տեղը, իսկ Մարթա Չլինգարյանը, գերազանցելով բոլոր մասնակիցների արդյունքները, վաստակել է 100 միավոր եւ դարձել մրցաշարի «Պատանի ախոյան»: Այս կապակցությամբ «Ապառաժ»-ը զրուցել է մասնակիցների հետ նրանց տպավորություններն ու կարծիքները լուսաբանելու համար:

Մարթա Չիլինգարյանը խոսքի սկզբում շնորհակալություն հայտնեց ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի պատանեկան հարցերի հանձնախմբին «Պատանի ախոյան» մրցույթը կազմակերպելու եւ իրենց մասնակցության հնարավորություն տալու համար:

««Պատանի ախոյան»-ը լոկ մրցույթ չէր մեզ համար, այլ հնարավորություն էր գաղափարակից ընկերներ գտնելու, մեր տաղանդները բացահայտելու եւ ներկայացնելու, նոր նպատակներ սահմանելու եւ դրանց հասնելու, մեր միասնականությունն ու ազգային գաղափարներն ի ցույց դնելու համար»,- ասել է Մ. Չիլինգարյանը:

Մարթան կարեւորեց հատկապես Արցախի շրջափակման պայմաններում մրցույթին մասնակցելը:

«Մրցույթը մեզ՝ արցախցիներիս համար կարեւոր էր իր տեսակով: Չնայած նրան, որ գտնվում ենք շրջափակման մեջ, այս կերպ մենք կարողացանք ինչ-որ չափով հաղթահարել այդ շրջափակումը, շփվել Արցախից դուրս գտնվող մեր ընկերների հետ: Այս մրցաշարն օգնեց մեզ չինքնամեկուսանալ եւ անհաղորդ չմնալ աշխարհում կատարվող իրադարձություններին: Մենք շփվեցինք Սփյուռքի մեր ընկերների հետ, ոգեւորվեցինք նրանց ազգային մտածելակերպով, որը այդ մի քանի ժամերի ընթացքում փոխանցվեց մեզ եւ ստիպեց ավելի ուժեղ լինել, դիմակայել շրջափակման այս ծանր օրերին, եւ, անկախ ամեն ինչից, սրտի խորքում ամուր պահել ազատ ու անկախ հայրենիք ունենալու գաղափարը»,- նշել է Մարթան:

Մարթայի համար ոգեւորիչ էր, որ իր ներկայացրած նյութը բոլորի կողմից միաձայն հավանության է արժանացել:

«Շփոթված եւ հիացած էի, երբ լսում էի, թե ինչպես են խոսում իմ ներկայացրած նյութի բովանդակության մասին: Տպավորությունները բազմազան էին եւ հպարտացնող: Զարմանալին այն էր, որ նույնիսկ այս օրերին հաղթանակի ոգին դեռ շարունակում էր ուղեկից լինել ինձ եւ նորանոր հաղթանակներ նվաճելու ձգտում առաջացնել: Ինձ համար մեծ պատիվ է կրել «Պատանի ախոյան» կոչումը: Ուրախ եմ, որ հենց ինձ է շնորհվել այն, սակայն գիտակցում եմ նաեւ, որ պարտավորեցնող է»,- ասել է նա:

Մարթայի խոսքով, մանավանդ

Արցախի շրջափակման այս օրերին՝ նույնիսկ ամենաչնչին հաղթանակները կարեւոր են, որովհետեւ դրանք ուրախություն ու ոգեւորություն են պատճառում հասարակությանը:

«Իմ այս հաղթանակն իսկապես ոգեւորել է ընտանիքիս, ուսուցիչներիս, ընկերներիս եւ մեր միության անդամներին»,- եզրափակել է Մարթան:

Անգելինա Հայրապետյանը նույնպես իր շնորհակալական խոսքն է ուղղել ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի պատանեկան հարցերի հանձնախմբին իրենց նախաձեռնած այս հրաշալի մրցույթի համար:

«Հպարտ եմ, որ հնարավորություն ունեցա մասնակցել «Պատանի Ախոյան» մրցաշարին եւ ներկայացնել Արցախը: Ավելի հպարտ եմ եւ ուրախ, որ ներկայացնելով հայրենիքս՝ կարողացա զբաղեցնել առաջին պատվավոր տեղը՝ Պատանի Ախոյան մրցույթի «Դրվագի ներկայացում» ասպարեզում»,- նշել է Անգելինան:

Նա մրցույթին իր ասպարեզում ներկայացրել է ՀՅԴ պատմության դրվագներից Նեմեսիս գործողությունը:

«Շրջափակման այս դժվարին օրերին ինձ ավելի են ուժ տալիս Նեմեսիսի, Լիզբոնի եւ նման այլ հերոսական դրվագները, որտեղ հերոսները կարողանում են բարձր պահել հայ ազգի փառքն ու արժանապատվությունը: Նրանց սխրանքները ուժ են տալիս մեզ՝ առաջ նայել պայծառ գալիքի տեսլականով»,- Անգելինան իր այս հաղթանակը դասում է իր կյանքում վաստակած հաղթանակներից ամենակարեւորների շարքում:

«Մեծ սիրով կմասնակցեմ նաեւ այլ մրցույթների եւ ջանք ու եռանդ չեմ խնայի՝ նորից ու նորից հաղթելու եւ բարձր պահելու հայրենիքիս, միությանս ու իմ պատիվը»,- ասել է նա:

Ըստ նրա, նմանատիպ մրցույթները հնարավորություն են տալիս ծանոթանալ եւ շփվել տարբեր երկրներում գտնվող միեւնույն գաղափարն իրենց մեջ կրող պատանիների հետ: Անգելինայի խոսքով, ինքը պատահական չէր ներկայացրել ՀՅԴ պատմության ամենանշանավոր դրվագներից մեկը, որովհետեւ գիտակցում էր, որ բոլորին ի վերջո իրար կապում է Սողոմոն Թեհլերյանի գաղափարախոսությունը, որը ծնվել է Դաշնակցության մեջ:

«Ինչպես հայտնի երգում է ասվում՝ մեզ միացնողը Դաշնակցությունն է, իսկ նպատակը՝ արդարությունը, այնպիսի արդարություն, որին իր ժամանակ կարողացել է հասնել Սողոմոն Թեհլերյանը եւ որին պետք է ձգտենք մենք: Ուստի, կարեւոր եմ համարում, որպեսզի հատկապես Նեմեսիսի մասին բոլորս իմանանք ու լավ իմանանք: Նեմեսիսի գաղափարը նորից արդիական է դարձել մեզ համար»,- եզրափակել է Անգելինան:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ուշքս ու միտքս մեր գյուղում է

«Երեխայի նման ամեն չնչին երեւույթից ուրախանում ու նորից տխրում ենք: Ուրախանում ենք, որ խանութներում սնունդ կա, տխրում ենք, որ լույսը հանգչում է, հետո ուրախանում ենք, որ միացնում են»,- այսպես է ստեփանակերտյան իր առօրյան նկարագրում Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղի բնակիչ Կամո Իսաբաբյանը: Ասում է՝ 2020թ. պատերազմի օրերին երկու օրից հետ գնալու պայմանով դուրս է եկել հայրենի գյուղից եւ այժմ 2 տարի 6 ամիս է՝ գնում ու տեղ չի հասնում:

«Ամենաշատը 3 ժամ եմ քնում, ուշքս ու միտքս մեր գյուղում է: Հաճախ ենք այստեղ ապրող ակնաղբյուրցիներով հավաքվում Սարուշենից դեպի աջ՝ «Բարի գալուստ Ակնաղբյուր» ցուցանակի մոտ տեղադրված խաչքարի մոտ, ծաղիկներ դնում, գյուղին նայում: Չենք հարմարվում այս իրավիճակին»,- ասում է նա: Երկհարկանի ընդարձակ տները թողած՝ հիմա 12 քառ մետրի վրա են ապրում: Հյուրեր ունենալու դեպքում միջանցքի սեղանի շուրջ են նստում, զրուցում: «Ով ինչ ուզում՝ անում է. ոչ դատ կա, ոչ դատաստան: Տեղին է հիշել մեծն Սիամանթոյի խոսքերը, ով դառնորեն կսկիծով գրել է՝ ով մարդկային արդարություն, թող ես թքեմ քո ճակատին»,- կիսվում է մեր զրուցակիցը, ով, չնայած այս ամենին, հուսով է, որ իրավիճակը կկարգավորվի՝ հանուն Արցախի բարեկեցության, հանուն նոր սերնդի ապագայի:

Համագյուղացիների ճնշող մեծամասնությունը Ստեփանակերտում են բնակվում, մի մասն էլ՝ Արցախի, Հայաստանի այլ բնակավայրերում: «Գյուղապետարան չունենք ոչ այստեղ, ոչ Ասկերանում, բայց երբ առիթ է լինում, հիմնականում՝ տխուր, բոլորը հավաքվում են: Ցրված են Արցախով մեկ: Տեղահանվածների կարգավիճակը սա է: Բայց օր չկա, որ մի քանի գյուղացու չհանդիպեմ: Մի դառը ճշմարտություն կա՝ տառապում ենք կարոտախտով, կարոտում ենք գյուղը, բայց չենք կարողանում հասնել. այսքան մոտիկ ու այսքան հեռու»,- պատմում է Կամոն:

Ակնաղբյուրցիների համար Քռասնի գյուղի մոտ եռահարկ շենքեր էին կառուցվում, սակայն շրջափակման ժամանակ շինարարություն չի ընթանում եւ տները կիսակառույց վիճակում են. «Բայցեւայնպես, ինչ-որ հեռանկար կա, որ գնալու ենք մեր օջախները: Միջազգային դատարանը պիտի ճիշտ որոշում կայացնի, ընկալի իրավիճակը, բռնապետին իր արժանի պատիժը տա, իսկ բռնազավթված հողերը վերադարձնեն իրենց տերերին: Ինչպե՞ս կարող է մարդ իր ողջ ունեցած-չունեցածը թողնել ու հեռանալ: Ես ինձ ոչ մի պարագայում պարտված չեմ զգում, մեր չափաբաժինն անցած պատերազմում արել ենք, իսկ սա ուրիշ խաղ էր, ուրիշ պատերազմ»: Նրա խոսքով՝ Արցախյան պատերազմներում ընկածների թափած արյունը իզուր չի եղել, ապրողները պիտի նրանց հիշատակը վառ պահեն՝ մնալով Արցախում: «Սա ուրիշ, աստվածային երկիր է: Խորհրդային Միության 80%-ը շրջել եմ, ոչ մի տեղ այսպիսի բնաշխարհ, այսպիսի մարդկային վերաբերմունք չեմ տեսել»:

Կամո Իսաբաբյանն աշխատում է Ծառլ Ազնավուրի անվան մշակութային կենտրոնում՝ որպես տնտեսվար: Աշխատասենյակը վեր է ածել սիրած զբաղմունքի՝ դրամների ու քարերի հավաքածուների հավաքագրման վայրի: Տարիների հավաքածուն մնացել է Ակնաղբյուրում: «74 երկրների 485 մետաղադրամներ ու 131 հատ թղթադրամ ունեի: Հասկանալի պատճառներով ամենաշատը ռուսական տարբեր դարաշրջանների դրամներն էին: Ամենահինը հունական հին արծաթե մետաղադրամն է, որը ծանոթ սակրավորներից մեկն էր ականներ որոնելու ժամանակ գտել ու հանձնել ինձ: Ոչ թիվ կար վրան, ոչ տառ, նախշազարդ էր: Ամենայուրահատուկը Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության 25 մլն-ոց թղթադրամն է, որն ազգականներիցս մեկն է նվիրել»,- ասում է նա:

2020թ. նոյեմբեր ամսից սկսել է նոր հավաքածու հայթայթել. «9-11-րդ դարերում արաբական պղնձե դրամները շրջանառության մեջ էին նաեւ Կովկասում, ծանր փող էր, ամենաքիչ 50-60 գրամ ու մանրելիս կտրում էին մի մասնիկը եւ տալիս: Փառք Աստծո, այդ փողից այստեղ էլ ունեմ: Այժմ 54 պետության 275 հատ մետաղադրամ եւ 54 հատ թղթադրամ ունեմ: Ամենահինը 1890թ. մեկ ռուբլիանոցն է»:

2002 թվականից սկսել է նաեւ տարբեր տեսակի ու երանգի քարեր հավաքել, գյուղում 1000-ից ավելի քար ուներ, հիմա 700-ից ավել ունի՝ ՀՀ-ից եւ Արցախի տարբեր շրջաններից:

Նրա խոսքով՝ ամեն քար իր յուրահատկությունն ու գեղեցկությունն ունի: Քանի որ օրեցօր ավելացող նմուշների համար տեղ չկա, մտադիր է որեւէ թանգարանի նվիրել հավաքածուները:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Պատարայի այցեքարտերից մեկը՝ շրջափակման օրերին

Արդեն 5-րդ տարին է, ինչ Ասկերանի շրջանի Պատարա գյուղում իր հյուրընկալ դռներն է բացել STEPAN's Bakery Guesthouse Patara զբոսաշրջային տունը: Այստեղ բազմատեսակ ծառայություններ են առաջարկում՝ ազգային ուտեստներով հյուրասիրություն, արցախյան մոտիվներով կահավորված կոլորիտ, գիշերակաց: Զբոսաշրջային տան տնօրենի՝ Էլմիրա Հայրապետյանի խոսքով, մտահղացումը որդունն է՝ Ստեփանինը: «Ձերմոց ենք մշակում, հյուրասիրում ենք գյուղական էկոլոգիապես մաքուր մթերքներով, ավանդական կերակրատեսակներով՝ կուրկուտ, խաշլամա, ժենգյալով հաց, խորոված, թոնրի փախլավա, թոնրի հաց»,- պատմում է տիկին Էլմիրան:

Նախքան հյուրատան բացումը ընտանիքը հացի փուռ ուներ, Պատարայի անուշաբույր հաց էին մատակարարում գյուղին ու Ստեփանակերտ քաղաքին: Հիմա իրենց թխած հացը վաճառքում չկա, պատրաստում են միայն ընտանիքի եւ հյուրերի համար:

Զբոսաշրջային տանը հիմնականում ինքն է աշխատում, հյուրերի թվից կախված վարձի դիմաց օգնության է կանչում համագյուղացիներից մի քանի հոգու: Գյուղացիներն ասում են՝ մի քանի ընտանիքի համար եկամտի աղբյուր է զբոսաշրջային տունը:

Ինչ վերաբերում է շրջափակմանը, ապա այն շատ է խոչընդոտել ընտանեկան բիզնեսին: Առաջին մի քանի ամիսներին ընդհանրապես չէին աշխատում, հիմա վերաբացվել են, բայց նախկին ծավալով չեն աշխատում: Հայաստանի Հանրապետությունից էին խմբերով այցելում, գիշերակացով մնում, հիմա հիմնական այցելուները Ստեփանակերտից ու Արցախի մյուս բնակավայրերից են, սակայն վառելիքի խնդրի պատճառով տեղացի զբոսաշրջիկների թիվն էլ է կրճատվել:

Զբոսաշրջային տունն աշխատում է տարվա բոլոր եղանակներին, հյուրատոունը կահավորում են եղանակային պայմաններին համապատասխան՝ ամռանը բացօթյա, ձմռանը՝ տաք վառարանի շուրջ:

Շրջափակումը խոչընդոտ է հանդիսացել նաեւ բիզնեսի ընդարձակման ծրագրերին: «Նախքան պատերազմը՝ որդիս որոշել էր մեծ հյուրանոց կառուցել, սակայն պատերազմը խանգարեց: Դրանից հետո հարեւան տունն ենք գնել, էլի մեծ հյուրանոց սարքելու նպատակով, կրակատեղին ենք պատրաստել: Բայց հիմա շինանյութ չկա, ընդարձակման աշխատանքները դադարեցվել են»,- ասում է Էլմիրա Հայրապետյանը՝

ավելացնելով, որ չի դժգոհում, փորձում է նոր պայմաններում աշխատանքները կարգավորել:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը անձերով չի պայմանավորվում

Թուրքիայում կայացած ընտրությունների, Հայաստանի հետ հարաբերությունների հնարավոր փոփոխությունների եւ այլ հարցերի շուրջ «Ապառաժ»-ը զրուցել է պ.գ.թ., թուրքագետ Վարուժան Գեղամյանի հետ:

- Թուրքիայում նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով վերընտրվել է Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Ինչքանո՞վ է կանխատեսելի այս արդյունքը՝ հատկապես ընտրությունների երկրորդ փուլի պարագայում:

- Ինձ համար շատ կանխատեսելի էր: Բոլոր հարցազրույցներում, հանրային խոսքում, այլ հարթակներում նշել եմ, որ Էրդողանը հաղթելու է, մի փոքր դժվարությամբ, բայց, այնուամենայնիվ, հաղթանակ է տանելու թե՛ խորհրդարանական, թե՛ նախագահական ընտրություններում՝ նկատի ունենալով, որ իր գլխավորած քաղաքական ուժը ընտրություններում զբաղեցնելու է առաջին տեղը: Հայաստանում մի քանի այլ մասնագետի կողմից եւս արվել է այդպիսի կանխատեսում: Դրա հիմքում ընկած են Թուրքիայի քաղաքական համակարգի եւ ներկայիս իրադրության մանրամասն քննությունը, որը թույլ է տալիս հասկանալ, որ ինչքան էլ ընդդիմությունը կարողացել է համախմբել ուժերը, ինչքան էլ կարողացել է որոշակի մոբիլիզացիա ապահովել, այնուամենայնիվ նախագահն ունի բավականաչափ վարկանիշ, պետական եւ այլ ռեսուրսներ Թուրքիայում հաղթանակ ապահովելու համար:

- Կարելի՞ է ասել, որ Թուրքիայում հաղթել է Ռուսաստանի նախընտրած թեկնածուն:

- Թուրքիայի քաղաքական համակարգը բավականին ինքնուրույն եւ անկախ է, որպեսզի այնտեղ լինի այս կամ այն երկրի նախընտրած թեկնածու: Տարբեր քաղաքական գործիչներ ունեն որոշակի տարբերություններ, բայց ազգային-պետական հարցերում նրանց միավորում է ընդհանուր գաղափարը: Դրա վառ վկայությունն այն է, որ Թուրքիայում թե՛ գործող նախագահը եւ թե՛ նրան ընդդիմացող հիմնական քաղաքական գործիչները հատկապես արտաքին քաղաքականության հարցերում գրեթե չունեն էական տարաձայնություններ: Այսինքն, կան ոճային եւ բովանդակային շատ փոքր տարբերություններ: Հետեւաբար, Թուրքիայի համատեքստում հնարավոր չէ ասել, որ այս կամ այն թեկնածուն պրոռուսական է, պրոարեւմտյան է կամ պրոայսինչական: Այլ հարց է, որ ռուսական կողմի համար նախընտրելի էր Էրդողանի վերընտրվելը, ոչ թե այն պատճառով, որ նա պրոռուսական գործիչ է կամ պրոռուսական գործունեություն է ծավալում, այլ այն պարզ պատճառով, որ ռուսական կողմն արդեն ունի Էրդողանի հետ աշխատելու փորձ եւ այս փուլում, երբ կա ուկրաինական ճակատ, կա առաջնահերթություն, այլ թեկնածուի ընտրվելու դեպքում, այսպես ասած՝ «հավելյալ» նոր կապեր հաստատելը, բանակցելը, իրար հարմարվելը ժամանակ եւ ռեսուրսներ էր խլելու: Ռուսաստանի համար Էրդողանը կանխատեսելի է այն իմաստով, որ արդեն գիտեն, թե ինչպես է աշխատում: Հետեւաբար, իր մասով քաղաքականություն մշակելը շատ ավելի հեշտ է, քան նոր թեկնածուի պարագայում: Միայն այս տեսանկյունից կարելի է ասել, որ Ռուսաստանի համար ընտրությունների այս արդյունքը շատ ավելի հարմար է, քան մյուսը: Բայց հարմար է ոչ գործընկերոջ, այլ դաշնակցի իմաստով:

Նույնը կարող ենք ասել նաեւ ԱՄՆ-ի դեպքում: Ամերկյան կողմի համար Էրդողանը շատ անհարմար գործընկեր է, բայց նրանք եւս գիտեն Էրդողանի աշխատելաոճը, գիտեն, որ կոպիտ է, շատ ավելի ագրեսիվ է, անկախ է մտքով եւ իր վարած քաղաքականությամբ: Էրդողանի իշխանությունը շատ ավելի հիմնավոր է, քան մնացած թեկնածուների դեպքում, ու ավելի ձեռնտու կլիներ, որ լիներ թույլ խաղացող, որին կարող են հեշտությամբ ճնշել:

- Այսինքն, Էրդողանին ռուսամետ գործիչ չե՞նք կարող համարել:

- Ոչ, Թուրքիայում այդ մասշտաբի որեւէ գործչի ռուսամետ չենք կարող համարել:

- Նախագահական ընտրություններում ինչպիսի՞ն էր տեղի հայ համայնքի ներգրավվածությունը. միասնական դիրքորոշում կա՞ր:

- Այս ընտրություններում հայ համայնքի դերակատարությունն այնքան մեծ չի եղել, որքան օրինակ 2019թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Մասշտաբները բոլորովին այլ էին, եւ հայկական համայնքի 20-30 000 ձայները այս պարագայում էական նշանակություն չեն ունեցել: Ասենք, օրինակ, Ստամբուլի քաղաքապետի ընտրությունների պարագայում այդ ձայները այդտեղ էական դերակատարում ունեցել են:

Մենք շատ տեղեկություն չունենք հայ համայնքի դիրքորոշման մասին, բայց ավանդաբար երկու թեւերին էլ ձայն տվողներ լինում են:

- Տեսակետ կար, որ ընդդիմադիր թեկնածուի ընտրության դեպքում կփոխվի Թուրքիայի քաղաքականությունը տարածաշրջանում, մասնավորապես՝ Հայաստանի հետ հարաբերությունների առումով: Արդյո՞ք Թուրքիայի արտաքին քաղաքականությունն անձերով է պայմանավորվում:

- Թուրքիայի արտաքին քաղաքականությունն անձերով չի պայմանավորվում, արտաքին քաղաքականության մեջ Թուրքիան հետապնդում է ազգային-պետական շահեր, որոնք կարելի է ասել, անփոփոխ են ոչ միայն տասնամյակներ, այլ հարյուրամյակներ ի վեր: Այդ ամենը վառ կերպով կարելի է տեսնել Հարավային Կովկասի հանդեպ Թուրքիայի վարած քաղաքականությամբ, եւ ճիշտ չէ խոսել այն մասին, որ այս կամ գործչի գալով ամբողջապես քաղաքականությունը փոխվում է: Փոխվում է մարտավարությունը, նպատակին հասնելու աշխատանքի ոճը, ճանապարհը, բայց ոչ նպատակը: Ռազմավարությունը մնում է նույնը, եւ ռազմավարական առումով՝ անկախ նրանից, թե ով կլինի ղեկավար, եթե նա թուրքական գործիչ է, ուրեմն մոտեցումն էլ լինելու է այսպիսին՝ շարունակաբար Հարավային Կովկասի վրա ազդեցության տարածում եւ այդ ազդեցության աստիճական փոխակերպում Կովկասի լիարժեք նվաճմամբ: Այս առումով՝ որեւէ փոփոխության ակնկալիք չպետք է լինի:

- Հունիսի 3-ին կայացած՝ Էրդողանի երդմնակալության արարողության հարցն է շատ քննարկվել, հատկապես Փաշինյանի ներկայությունը, նրա զբաղեցրած տեղը երկրորդ շարքում: Ինչպե՞ս եք գնահատում նման միջոցառմանը ՀՀ վարչապետի մասնակցությունը, արդյո՞ք ՀՀ բարձրաստիճան պաշտոնյայի առաջին մասնակցությունն էր նմանատիպ միջոցառման:

- Առաջին դեպքը չէ, էլի են եղել նման դեպքեր, բայց ոչ այս պայմաններում, երբ հայերն ունեն գերիներ, երբ Հայաստանը գտնվում է թուրքական եւ ադրբեջանական համատեղ ուժերի օկուպացիայի տակ, երբ Արցախի 70%-ը օկուպացված է, իսկ Արցախը շրջափակման մեջ: Այս առումով՝ որեւէ կերպ համեմատելի չեն նախորդ դեպքերի հետ: Պետք է հասկանալ, թե որքանով է նպատակահարմար հիմա գնալը: Ես կարծում եմ, որ այդպիսի անհրաժեշտություն չկար, եւ սա պարզապես Հայաստանի Հանրապետության դե ֆակտո իշխանությունների թուրքամետ քաղաքական գծի արտահայտումն է:

- Այդ դեպքում, ինչո՞վ է պայմանավորված արարողության ժամանակ բացահայտ արհամարհական վերաբերմունքը Փաշինյանի նկատմամբ:

- Բայց ինչո՞ւ պետք է հարգեին, պատվեին: Արհամարհական էր, որովհետեւ թույլ քաղաքական գործիչ է, թույլ իշխանություն է ներկայացնում եւ, հետեւաբար, նրա հետ ինչ-որ բան քննարկելու, հարգանքի կամ պատվի արժանացնելու կարիք չկա, ընդհակառակը՝ պետք է հակառակն անել՝ դրանով էլ ավելի ճնշում գործադրելով:

- Նոր կառավարություն է ձեւավորել: Հաշվի առնելով կազմը՝ կանխատեսո՞ւմ եք ներքին ու արտաքին քաղաքականության մեջ կտրուկ փոփոխություն:

- Նոր կառավարությունն ըստ էության հաստատելու է այն գիծը, որը որդեգրվել է վերջին տարիներին: Մասնավորապես, Ազգային հետախուզական ծառայության տնօրեն Հաքան Ֆիդանի նշանակումը արտաքին գործերի նախարարի պաշտոնում՝ նշանակում է, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը շարունակելու է մնալ ռազմականացված: Հաքան Ֆիդանն էր ղեկավարում Թուրքիայի սահմաններից դուրս Անկարայի ռազմական գործողությունները, Կովկասում՝ այսինքն Արցախում, Սիրիայում, Իրաքում, Լիբիայում եւ այլ վայրերում: Նրա նշանակումն արտաքին գործերի նախարարի պաշտոնում միանգամայն տրամաբանորեն հուշում է, որ Թուրքիան շարունակելու է ագրեսիվ ռազմականացված արտաքին քաղաքականությունը եւ Թուրքիայի համար նշված տարածաշրջանները շարունակելու են լինել գերակա:

Ինչ վերաբերում է այլ նշանակումներին, ապա կան նշանակումներ, որոնք ավելի շատ երկարաժամկետ տեսլականի պարագայում են առանցքային լինելու, այսինքն՝ Էրդողանի հաջորդների համար: Այս տեսանկյունից էական է հատկապես Ազգային հետախուզական ծառայության տնօրեն Հաքան Ֆիդանի փոխարեն Թուրքիայի նախագահի գլխավոր խորհրդական Իբրահիմ Քալընի նշանակումը, ինչը խորհրդանշում է, որ Իբրահիմ Քալընը հնարավոր է նաեւ լինի այն մարդկանիցից մեկը, ով կարող է, պատկերավոր ասած՝ ժառանգել Էրդողանի «գահը»: Այլ նշանակումներ եւս կան, բայց չեմ կարծում, թե դրանք էական են:

- Ձեր գրառումներից մեկում նշել էիք, որ նոր կառավարության կազմում կան հակահայկական գործունեություն ծավալած անձինք: Ինչքանո՞վ կարող է նրանց ներկայությունն ազդեցություն ունենալ Հայաստանի հետ հարաբերություններում:

- Բոլոր նշված անձիք էլ հակահայկական են, որովհետեւ Թուրքիայի քաղաքական համակարգի մի մասն են: Թուրքիայի քաղաքական համակարգն ունի մեկ խնդիր՝ վերացնել հայկական պետությունները, եւ այս առումով՝ կապ չունի՝ ինչքանով են առանձին վերցրած կառավարության անդամները, պետական պաշտոնյաները նախորդիվ աչքի ընկել հակահայկական գործունեությամբ: Իհարկե, կան մարդիկ, որոնք շատ ավելի են աչքի ընկել դրանով: Օրինակ, նոր նշանակված՝ ընտանիքի եւ սոցիալական ծառայությունների նախարար Մահինուր Օզդեմիր Գյոքթաշը, որը Բելգիայում քաղաքական ակտիվ գործունեություն էր ծավալում, դարձել էր Բելգիայի խորհրդարանի գլխաշորով առաջին պատգամավորը: Սակայն 2015թ. նրա բելգիական քաղաքական կարիերան ավարտվեց, նրան հեռացրին բելգիական կուսակցությունից Հայոց ցեղասպանության մերժման համար: Բայց, այնուամենայնիվ, նա չի տարբերվում, ասենք՝ Հաքան Ֆիդանից, որն ամեն օր հակահայկական խոսքով հանդես չի գալիս, բայց ղեկավարել է Արցախի մեծ մասի օկուպացիան:

- Արցախի հետ կապված՝ կարելի՞ է համարել, որ վերջին պատերազմի արդյունքները Թուրքիային լիովին բավարարում են՝ հաշվի առնելով ռուս-թուրքական համատեղ կենտրոնը օկուպացված տարածքներում եւ Ադրբեջանի բանակում Թուրքիայի ունեցած դերը:

- Կարծում եմ՝ ոչ լիովին, բայց մեծամասամբ բավարարում են: Չեն բավարարում այն իմաստով, որ նպատակները շատ ավելի մեծ են, քան այս պահին ստացածը, բայց բավարարում են այն իմաստով, որ ներկա ձեռքբերումն արդեն իսկ զգալի է եւ հնարավորություն է ստեղծելու այնուհետեւ մնացած նպատակներին եւս հասնել:

Հարցազրույցը՝ Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան